# ՋՈՅՍ ՄԱՅԵՐ

#1 ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ՀԵՂԻՆԱԿ՝ ԸՍՏ «ՆՅՈՒ ՅՈՐՔ ԹԱՅՄՍ» ԱՄՍԱԳՐԻ



# ՆՈՐ ԿՅԱՆՔ

Ի՞նչ է նշանակում
Քրիստոսին ընդունելը

# ՆՈՐ ԿՅԱՆՔ

## Ի՞նչ է նշանակում Քրիստոսին ընդունելը

ՋՈՅՍ ՄԱՅԵՐ

FaithWords™

A New Way of Living

Joyce Meyer

Նոր կյանք

Ջոյս Մայեր

© 2007 Ջոյս Մայեր

Աստվածաշնչյան մեջբերումները թարգմանված են անգլերեն «Ընդլայնված թարգմանությունից» (AMP):

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Համաձայն «1976թ. ԱՄՆ-ի Հեղինակային իրավունքների մասին օրենքի», այս գրքի ցանկացած մասի տեսածրումը, վերբեռնումը կամ փոխանցումն էլեկտրոնային միջոցներով՝ առանց հրատարակչի թույլտվության, անօրինական է և համարվում է հեղինակային իրավունքների խախտում և հեղինակի ինտելեկտուալ սեփականության գողություն: Եթե ցանկանում եք օգտագործել որևէ նյութ այս գրքից (բացառությամբ վերանայման նպատակով), անհրաժեշտ է նախապես ստանալ գրավոր թույլտվություն՝ կապ հաստատելով հրատարակչի հետ: Շնորհակալություն հեղինակի իրավունքները պաշտպանելու համար:

Հեղինակը ցանկանում է նշել, որ Գլուխ 3-ում (էջեր 20-23) օգտագործված պատմությունը օրինակ է Դոկտոր Մոնրո Փարքերին պատկանող մի քարոզից, որն օգտագործվում է ըստ թույլտվության:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐԸ ԵՐԲԵՎԷ ԿԿԱՅԱՑՆԵՔ 5
2. ԲՈԼՈՐՍ ՄԵՂՔ ԵՆՔ ԳՈՐԾԵԼ 11
3. ԱՆՁՆԱՏՈՒՐ ԼԻՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է 20
4. ՆՈՐ ԿՅԱՆՔ 28
5. ՆՈՐ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ 41
6. ՆՈՐ ԽՈՍԵԼԱՁԵՎ 51
7. ՆՈՐ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆ 58
8. ՀԱՎԱՏՔ՝ ՎԱԽԻ ՓՈԽԱՐԵՆ 66
9. ՎԱՅԵԼԵ՛Ք ԿՅԱՆՔԸ 72

ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ 78
ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ 80

## *Գլուխ 1*

# ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐԸ ԵՐԲԵՎԷ ԿԿԱՅԱՑՆԵՔ

⚜ Դուք դժգո՞հ եք ձեր կյանքից: Եթե այո, ապա դուք միայնակ չեք: Մարդկանց մեծամասնությունը հոգնած, սպառված, դատարկ և անլիարժեք է զգում: Ոմանք փորձել են կրոնը՝ հուսալով փարատել այդ զգացմունքները, բայց է՛լ ավելի են ծանրաբեռնվել անկյանք և անտրամաբանական կանոններով, որոնք չեն կարողացել պահել: Եթե դուք փորձել եք կրոնը, դա չի նշանակում, որ ընտրել եք Աստծուն՝ որպես լուծում ձեր կյանքի դատարկության, հիասթափության և մեղքի զգացումի համար:

Եթե դուք կարիք ունեք սիրված զգալու, եթե ձեզ պետք է ընկեր, եթե անհրաժեշտ է, որ ձեր մեղքերը ներված լինեն, և եթե դուք ցանկանում եք ապագա

ունենալ... ձեր պատասխանը Հիսուս Քրիստոսն է: Նա սպասում է, որ տա ձեզ նոր կյանք և դարձնի լիովին նոր ստեղծագործություն:

Եթե դուք գոհ չեք ձեր կյանքից, պետք է փոխեք ինչ-որ բան: Եթե մենք շարունակենք անել այն, ինչ միշտ արել ենք, մենք կապրենք այնպես, ինչպես որ միշտ ապրել ենք: Դուք պետք է մի որոշում կայացնեք՝ ամենակարևոր որոշումը, որը երբևէ կայացնելու եք:

Այս որոշումն ավելի կարևոր է, քան այն մասնագիտությունը, որը դուք ընտրելու եք, այն, թե որտեղ եք սովորելու, ում հետ եք ամուսնանալու, ինչի մեջ եք ներդնելու ձեր փողը և որտեղ եք ապրելու: Հավիտենությունն անվերջ է, և յուրաքանչյուրս պետք է իմանա, թե որտեղ է անցկացնելու այն: Գոյություն ունի կյանք մահից հետո: Երբ դուք մահանում եք, չեք դադարում գոյություն ունենալ. դուք պարզապես շարունակում եք ձեր գոյությունն այլ վայրում: Ինչ-որ մեկն ասել է, որ մահանալը նման է պտտվող դռնից անցնելուն: Դուք պարզապես դուրս եք գալիս մի վայրից և մտնում մյուսը:

Ցանկանո՞ւմ եք հաղորդակցվել Աստծո հետ այս կյանքում և ապրել Նրա հետ հավիտյան: Եթե այո,

դուք պետք է ընդունեք Հիսուս Քրիստոսին՝ որպես ձեր Փրկչի: Բոլորս մեղք ենք գործել, և բոլորս Փրկչի կարիք ունենք: Աստված ուղարկեց Իր միակ Որդուն՝ վճարելու մեր մեղքերի պատիժը: Նա խաչվեց և թափեց Իր անմեղ արյունը՝ որպես վճար մեր հանցանքների: Նա մահացավ և թաղվեց, բայց երրորդ օրը հարություն առավ մեռելներից, և այժմ նստած է Երկնքում՝ Հայր Աստծո աջ կողմը: Նա խաղաղություն, ուրախություն և Աստծո առջև արդար դիրք ունենալու ձեր միակ հույսն է:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ մեր մեղքերից փրկվելու համար մենք պետք է խոստովանենք և ընդունենք, որ Հիսուսը Տերն է, և պետք է հավատանք մեր սրտում, որ Աստված հարություն տվեց Նրան մեռելներից:

> «Քանի որ եթե ընդունես և դավանես քո շուրթերով, որ Հիսուսը Տերն է, և քո սրտում հավատաս (հարես, վստահես և ապավինես այն ճշմարտությանը), որ Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կփրկվես»:
>
> – Հռոմեացիների 10.9, AMP

Այս տեսակի հավատքն ավելին է, քան մտավոր համաձայնությունը. այն անկեղծ է և ի սրտե: Շատերը հավատում են, որ Աստված կա, բայց չեն նվիրել իրենց կյանքը Նրան: Աստված Կյանքի Հեղինակն է, և Նա ցանկանում է, որ դուք հոժարաբար և ուրախությամբ տաք Իրեն այն կյանքը, որն Ինքն է տվել ձեզ: Աստված ստեղծել է ձեզ ազատ կամքով և չի հարկադրի ձեզ ընտրել Իրեն: Բայց այն՝ դուք կընտրե՞ք Նրան, թե՞ ոչ, կորոշի ձեր կյանքի որակն այս երկրի վրա, ինչպես նաև որոշիչ կդառնա այն հարցում, թե որտեղ կանցկացնեք հավիտենությունը, երբ մահանաք:

Ձեզ մոտ լա՞վ է ստացվում տնօրինել ձեր կյանքը: Եթե ոչ, ինչո՞ւ չհանձնեք այն Նրան, Ով ստեղծել է ձեզ և գիտի ձեր մասին ավելին, քան ինքներդ երբևէ կիմանաք: Եթե ես մեքենա գնեմ և խնդիրներ ունենամ դրա հետ, կտանեմ այն արտադրողի մոտ՝ նորոգելու համար: Նույն սկզբունքը վերաբերում է Աստծուն: Նա ստեղծել է ձեզ և անչափ սիրում է ձեզ: Եթե ձեր կյանքը չի գոհացնում ձեզ, բերեք այն Նրա մոտ՝ նորոգելու համար:

Ինչպես արդեն ասացի, ոչինչ չի փոխվի, քանի դեռ դուք որոշում չեք կայացրել. դուք ցանկանո՞ւմ

եք քրիստոնյա լինել: Դուք պատրա՞ստ եք հանձնել Աստծուն ոչ միայն ձեր մեղքը, այլև ձեր կյանքը: Դուք պատրա՞ստ եք շրջվել ձեր մեղսալի ճանապարհներից և սովորել ապրել նոր կյանքով՝ Աստծո հետ և Աստծո համար: Եթե այո, շարունակեք կարդալ, քանի որ ձեզ սպասում է այնպիսի կյանք, որը գերազանցում է ձեր ամենավառ պատկերացումները: Այն հասանելի է բոլորին: Ոչ ոք անտեսված չէ: Ահա թե ինչ է ասում Աստված ձեր ապագայի մասին:

> «Որովհետև Ես գիտեմ այն մտքերը և ծրագրերը, որոնք ունեմ քեզ համար,- ասում է Տերը,- մտքեր և ծրագրեր բարեկեցության և խաղաղության և ոչ՝ չարիքի համար, որպեսզի տամ քեզ հույս քո ապագայի համար»:
>
> – Երեմիա 29.11, AMP

Ոչ ոք չի կարող կայացնել այս որոշումը ձեր փոխարեն: Դո՛ւք, և միայն դո՛ւք պետք է անեք սա: Կյանքի ի՞նչ որակ եք ցանկանում ունենալ: Դուք իսկապե՞ս ցանկանում եք հետևել այն օրինակին, որը տեսնում եք մեր այսօրվա հասարակության մեջ: Աստծո Խոսքն ասում է, որ մենք ոչինչ չենք բերել այս աշխարհ և ոչինչ էլ չենք տանելու այստեղից

(տե՛ս Ա Տիմոթ. 6.7)։ Աստված Ալֆան և Օմեգան է՝ սկիզբը և վերջը։ Սկզբում Աստված էր, և վերջում կլինի Աստված։ Յուրաքանչյուրը կկանգնի Աստծո առջև և հաշիվ կտա իր կյանքի համար (տե՛ս Հռոմ. 14.12)։ Հիմա է ժամանակը, որ պատրաստվեք դրան։ Ես միշտ ասում եմ. «Հիսուսը գալիս է, անկախ այն բանից՝ դուք պատրա՞ստ եք, թե՞ ոչ»։ Պատրաստվեք հիմա՛, ճիշտ որոշում կայացրեք հիմա՛, քանի որ հետո կարող է շատ ուշ լինել։

*Գլուխ* 2

# ԲՈԼՈՐՍ ՄԵՂՔ ԵՆՔ ԳՈՐԾԵԼ

⚜ Մեղքը կամավոր անհնազանդություն է Աստծո հայտնված կամքին: Բոլորս ենք մեղք գործել: Այս աշխարհում չկա մի մարդ, ով երբևէ մեղք չի գործել (տե՛ս Հռոմ. 3.23, Ժողով. 7.20): Սա վատ լուր է, բայց կա նաև բարի լուր: Մենք կարող ենք ներում ստանալ և արդարանալ Աստծո առջև:

> «Քանի որ բոլորը մեղանչել են և չեն համապատասխանում այն պատվին և փառքին, որ Աստված շնորհում և ընդունում է:
>
> [Բոլորը] արդարացվում են և դարձվում են ուղիղ ու արդար դիրք ունեցող Աստծո առջև՝ ձրիաբար և անհատույց կերպով, Նրա շնորհքով (Նրա բարեհաճությամբ և ողորմությամբ, որ տրվում է ոչ ըստ արժա-

նիքների), այն փրկագնման միջոցով, որը [տրված է] Քրիստոս Հիսուսում»:

– Հռոմեացիների 3.23,24, AMP

Հիսուսն արդեն վճարել է ձեր մեղքերի համար. դուք միայն պետք է հավատաք և ընդունեք դա: Եթե խոստովանեք ձեր մեղքերը, զղջաք և ցանկանաք լիովին շրջվել դրանցից, Աստված կների և նոր մարդ կդարձնի ձեզ:

«Եթե մենք [ինքնակամ] ընդունենք, որ մեղանչել ենք, և խոստովանենք մեր մեղքերը, Նա հավատարիմ և արդար է (ճշմարիտ Իր բնությանը և խոստումներին) և կների մեր մեղքերը [կհեռացնի մեր անօրինությունը] և [շարունակաբար] կմաքրի մեզ ամեն անարդարությունից [այն ամենից, ինչը չի համապատասխանում Նրա կամքին՝ մեր մտադրությունների, մտքերի և գործերի մեջ]»:

– Ա Հովհաննես 1.9, AMP

Կարիք չկա սպասելու, որ Աստված ինչ-որ բան անի: Նա արդեն արել է այն, ինչ պետք է: Նա տվել է Իր միակ Որդուն՝ մահանալու մեր փոխարեն, քանի

որ միայն կատարյալ և անմեղ զոհը կարող էր քավել մեր հանցանքները: Նրա զոհը բավարարեց արդարադատությունը, և մենք կարող ենք ազատություն ստանալ՝ հավատալով Հիսուս Քրիստոսին և սկսելով մտերմորեն հաղորդակցվել Աստծո հետ Նրա միջոցով: Մենք չենք կարող ինքներս գնալ Աստծո մոտ. մեզ պետք է դատապաշտպան: Մեզ պետք է ինչ-որ մեկը՝ որպես միջնորդ, և այդ անձնավորությունը Հիսուսն է: Հիսուսը կանգնեց մեր և Աստծո միջև գտնվող անդունդի վրա՝ այն անդունդի, որը ստեղծել էր մեր մեղքը, և Նա բերում է մեզ Աստծո մոտ:

Ինչպես որ երեխայի հայրը գտնվում է նրա մեջ (նրա արյան, ԴՆԹ-ի, քրոմոսոմների և այլն), այնպես էլ Աստված Քրիստոսում էր, երբ հաշտեցրեց աշխարհն Իր հետ: Աստված սիրում է մարդկանց, որոնց ստեղծել է, և Նա չի կամենում, որ նրանք մատնվեն մեղքի ստրկությանը՝ առանց ելք ունենալու: Նա տվեց մեզ այդ ելքը. մեր ելքը և ճանապարհը Հիսո՛ւսն է:

## Մեղքն անեծք է բերում

Աստծո Խոսքն ասում է, որ մեր մեղքը կգտնի մեզ (տե՛ս Թվոց 32.23): Մեղքը բերում է անեծք, իսկ հնազանդությունը՝ օրհնություն (տե՛ս Երկր. Օր. 28):

Որոշ ժամանակ կարող է թվալ, թե մարդն անպատիժ կերպով մեղք է գործում: Թվում է՝ նման մարդն ապրում է մյուսների պես, բայց, ի վերջո, նրա որոշումները հետևանքներ են ունենալու:

Երբ որոշում ենք ապրել մեղքի մեջ՝ Աստծուն հնազանդվելու փոխարեն, մենք տառապանք ենք զգում մեր անձում: Մարդն ավելին է, քան ոսկրից և մարմնից կազմված մարմինը: Նա հոգի է և ունի անձ, որը բաղկացած է մտքից, կամքից և զգացմունքներից: Այն մարդու անհատականությունն է: Մեղավորները տառապում են իրենց մտքում: Նրանք համակված են մտավոր տանջանքով և անկախ այն բանից, թե ինչ են անում կամ ինչ ունեն՝ ոչինչ չի կարող լիովին գոհացնել նրանց: Նրանք տառապում են զգացմունքորեն: Քանի որ որոշել են անձամբ տնօրինել իրենց կյանքը, նրանք հիասթափվում և բարկանում են (զգացմունքորեն վրդովվում են) ամեն անգամ, երբ ինչ-որ բան իրենց ուզածով չի լինում: Նրանք ոչինչ չգիտեն հավատքի ճանապարհի մասին: Նրանց համար անըմբռնելի է վստահությունն Աստծո հանդեպ՝ ավելի մեծ ուժի, քան իրենք են: Նրանք այդպես էլ չեն մտնում Նրա հանգստի մեջ, քանի որ մարդը կարող է մտնել Աստծո հանգստի մեջ միայն Նրան հավատալու մի-

ջցով (տե՛ս Եբր. 4.3):

Այո՛, մեղավոր կյանքը լի է անեծքներով: Դրանից չի բխում ոչ մի բարի բան: Ահա թե ինչ է Աստված ասում այն մարդու վախճանի մասին, ով փորձում է ապրել առանց Իրեն.

> «Եվ Ես նեղություն կբերեմ մարդկանց վրա, որ կույրերի պես ման գան, որովհետև նրանք մեղանչեցին Տիրոջ դեմ. նրանց արյունը պիտի թափվի փոշու պես, և նրանց մարմինը՝ գոմաղբի պես:
>
> Նրանց արծաթն էլ, նրանց ոսկին էլ չեն կարող նրանց ազատել Տիրոջ վրդովմունքի և բարկության օրը: Բայց ամբողջ երկիրը կսպառվի Նրա նախանձավոր բարկության կրակով, այո՛, հանկարծ Նա լիովին վերջ կտա երկրի բոլոր բնակիչներին»:
>
> – Սոփոնիա 1.17,18, AMP

Այս խոսքերը վախ են ներշնչում, բայց դրանք չպետք է վախ առաջացնեն Հիսուս Քրիստոսին անկեղծորեն հավատացողի սրտում: Հիսուսին հավատացողները երբեք չեն գնա դատաստանի, այսինքն՝ չեն դատապարտվի (տե՛ս Հովհ. 3.18):

# Մեղքի զգացում և դատապարտություն

Մեղքի զգացումը մեղավորի մշտական ուղեկիցն է: Մեղավոր մարդը կարող է տարբեր բաներ անել՝ այն անտեսելու համար, բայց խորը իր ներսում նա գիտի, որ իր կյանքը ճիշտ չէ: Հիսուսն ասաց, որ մեղավորները չեն կարող խուսափել մեղքի զգացումից (տե՛ս Հովh. 9.41):

Աստվածաշունչը բաժանված է Հին և Նոր կտակարանների: Հին կտակարանը համապատասխանում է իր անվանը. այն «հին» է: Այն ներկայացնում է Հին ուխտը, որում Աստված ծածկում էր մարդկանց մեղքերը, մինչև որ գար Հիսուսի կողմից նոր ուխտ հաստատելու ժամանակը: Մեղքերի համար զոհեր մատուցելու համակարգում մարդկանց մեղքերը ծածկվում էին, բայց այդպես էլ չէին հեռացվում: Նրանք մշտապես մեղքի զգացում ունեին: Այնուամենայնիվ, Նոր կտակարանում՝ Նոր ուխտի ներքո, մենք ունենք կատարյալ և վերջնական զոհ, որը ոչ թե ծածկում է մեղքը, այլ՝ լիովին հեռացնում: Եվ այն հեռացնում է ոչ միայն մարդու մեղքը, այլև դրան ուղեկցող մեղքի զգացումը:

Դանդաղորեն կարդացե՛ք հետևյալ աստվածաշնչյան հատվածները և մտածե՛ք այն ազդեցիկ

ուղերձի մասին, որ դրանք փոխանցում են: Բոլոր այս հատվածները Եբրայեցիների 10-րդ գլխից են:

> «Եվ համաձայն այս [Աստծո] կամքի, մենք դարձել ենք սուրբ (ընծայված և սրբագործված) Հիսուս Քրիստոսի (Օծյալի) մարմնի *մեկընդմիշտ արված* զոհաբերության միջոցով»:
>
> – Եբրայեցիների 10.10, AMP
> (շեղագիրը հեղինակինն է)

> «Մինչդեռ Նա [Քրիստոսը], այն բանից հետո, երբ մատուցեց մեկ զոհ մեր մեղքերի համար [որը գործելու է] բոլոր ժամանակներում, նստեց Աստծո աջ կողմը»:
>
> – Եբրայեցիների 10.12, AMP

> «Սա է այն պայմանագիրը (կտակարանը, ուխտը), որը Ես կհաստատեմ և կկնքեմ նրանց հետ այդ օրերից հետո,- ասում է Տերը. Ես կդրոշմեմ Իմ օրենքները նրանց սրտերի վրա, և Ես կփորագրեմ դրանք նրանց մտքերի վրա (նրանց ներսի մտքերի և հասկացողության վրա):

> Դրանից հետո Նա շարունակում է. «Եվ նրանց մեղքերը և նրանց հանցանքները Ես այլևս չեմ հիշի»»:
>
> – Եբրայեցիների 10.16,17, AMP

> «Եկեք բոլորս առաջ գանք և մոտենանք ճշմարիտ (ազնիվ և անկեղծ) սրտերով, անվերապահ վստահությամբ և բացարձակ համոզվածությամբ՝ ծնված հավատքից (ամբողջ մարդկային անհատականությունն Աստծո վրա հենելուց՝ բացարձակ վստահությամբ և համոզվածությամբ Նրա զորության, իմաստության և բարության մեջ), մեր սրտերը ցողված և մաքրագործված հանցավոր (չար) խղճից և մեր մարմինները մաքրված սուրբ ջրով»:
>
> – Եբրայեցիների 10.22, AMP

Այս հատվածները ներկայացնում են մեզ բազմաթիվ անչափ կարևոր և հրաշալի իրողություններ: Առաջինն այն է, որ Հիսուսը մեկընդմիշտ զոհեց Իրեն, և չկա որևէ զոհ, որը երբևէ անհրաժեշտ կլինի ավելացնել Նրա արածին: Հին ուխտի ներքո պետք էր կրկին ու կրկին զոհեր մատուցել, սակայն դրանք այդպես էլ չէին հեռացնում մեղքը և մեղքի զգացումը:

Մեղքի զգացումն օրինապես հեռացվել է, բայց միգուցե կարիք լինի, որ սովորենք, թե ինչպես ազատ լինենք դրանից: Իրականում, այս նոր կյանքը, որը մենք ապրում ենք Քրիստոսի համար, պահանջում է, որ սովորենք հաղթահարել մեր զգացմունքները: Մենք այլևս չենք կարող թույլ տալ, որ զգացմունքները վերահսկեն մեզ: Մենք պետք է ճանաչենք Աստծո Խոսքը և հնազանդվենք՝ անկախ այն բանից, թե ինչ ենք զգում: Հնազանդ կյանքը շնորհում է անզուգական օրհնություններ:

## Գլուխ 3

# ԱՆՁՆԱՏՈՒՐ ԼԻՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է

Դուք կա՛մ արդեն ընդունել եք Քրիստոսին և պատվիրել եք այս գիրքը՝ որպես օգնություն Քրիստոսի հետ նոր կյանք սկսելու համար, կա՛մ այս գիրքը նվիրել են ձեզ, և հուսով եմ՝ դուք պատրաստ եք կայացնել այս որոշումը հիմա:

Հովհաննես 3.16-ում գրված է. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն տվեց, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ՝ հավիտենական կյանք ունենա» (Արարատ թարգմանություն):

Թույլ տվեք պատմել մի պատմություն, որը կօգնի ձեզ հասկանալ, թե որքան զորավոր է այս խոսքը:

Մի ցուրտ և մութ երեկո Չիկագո քաղաքում ձնաբուք էր: Մի փոքրիկ տղա թերթ էր վաճառում փողոցի անկյունում: Մարդիկ գնացել էին իրենց տները՝

ցրտի պատճառով, իսկ փոքրիկ տղան այնքան էր սառել, որ չէր էլ փորձում շատ թերթեր վաճառել: Նա մոտեցավ մի ոստիկանի և ասաց.

- Պարո՛ն, միգուցե դուք իմանաք, թե որտեղ կարող է աղքատ տղան տաք վայր գտնել՝ այս գիշեր քնելու համար: Գիտեք, ես քնում եմ մի արկղի մեջ՝ այս փողոցի նրբանցքներից մեկում, բայց հիմա սարսափելի ցուրտ է: Լավ կլիներ, եթե կարողանայի գիշերել որևէ հարմարավետ վայրում:

Ոստիկանը նայեց փոքրիկ տղային և ասաց.

- Ես կասեմ, թե ինչ անես: Գնա՛ այս փողոցով դեպի այն մեծ սպիտակ տունը և թակի՛ր դուռը: Երբ հարցնեն՝ ով է, պարզապես ասա՝ «Հովհաննես 3.16», և քեզ ներս կթողնեն:

Տղան այդպես էլ վարվեց: Բարձրացավ աստիճաններով դեպի դուռը, թակեց, և մի կին պատասխանեց ներսից: Տղան վեր նայեց ու ասաց.

- Հովհաննես 3.16:

- Նե՛րս եկ, - ասաց կինը:

Նա ներս տարավ տղային, նստեցրեց ճոճաթոռի վրա մեծ բուխարու առջև և գնաց: Տղան մի քիչ նստեց այդտեղ՝ մտածելով. *«Հովհաննես 3.16. ես չեմ հասկանում այն, բայց այն տաքացրեց սառած տղային»:*

Ավելի ուշ կինը եկավ և հարցրեց.

- Դու քաղցա՞ծ ես:

- Մի փոքր, - պատասխանեց տղան: - Ես երկու օր է՝ ոչինչ չեմ կերել, և կարծում եմ՝ մի փոքր կերակուրը չէր խանգարի:

Կինը խոհանոց տարավ նրան և նստեցրեց հրաշալի կերակուրներով լի սեղանի առջև: Տղան այնքան կերավ, որ այլևս չէր կարողանում ուտել: Նա կրկին մտածեց. *«Հովհաննես 3.16. ես չեմ հասկանում այն, բայց այն կշտացրեց քաղցած տղային»:*

Կինը տարավ նրան երկրորդ հարկ՝ լոգասենյակ, որտեղ մեծ լոգարան կար՝ լիքը տաք ջրով: Տղան նստեց դրա մեջ և որոշ ժամանակ մնաց ջրի մեջ: Ջրի մեջ նստած՝ մտածեց. *«Հովհաննես 3.16. ես չեմ հասկանում այն, բայց այն մաքրեց կեղտոտ տղային»:* Կինը ներս մտավ և տղային տարավ մի սենյակ, պառկեցրեց հին բմբուլե անկողնու վրա, ծածկեց և համբուրեց՝ բարի գիշեր մաղթելով, ու անջատեց լույսը: Պառկած մթի մեջ՝ տղան նայեց պատուհանից և տեսավ ձյունը, որ գալիս էր այդ ցուրտ գիշերը: Նա մտածեց. *«Հովհաննես 3.16. ես չեմ հասկանում այն, բայց այն հանգստացրեց հոգնած տղային»:*

Հաջորդ առավոտյան կինն իջեցրեց նրան ներքև և նստեցրեց միևնույն կերակուրներով լի մեծ սեղանի մոտ: Երբ տղան կերավ, վերջացրեց, կինը տարավ ու նստեցրեց նույն հին ճոճաթոռին՝ բուխարու առջև: Նա վերցրեց Աստվածաշունչը, նստեց և ասաց.

- Դու գիտե՞ս, թե ինչ է Հովհաննես 3.16-ը:

- Ո՛չ, տիկի՛ն: Առաջին անգամ կյանքում ես լսեցի այն անցած գիշեր, երբ փողոցում կանգնած ոստիկանը սովորեցրեց ինձ, թե ինչպես օգտագործեմ այն:

Նա բացեց Հովհաննես 3.16-ն Ավետարանում և սկսեց պատմել Հիսուսի մասին: Հենց այդտեղ՝ բուխարու մոտ, տղան նվիրեց իր սիրտը և կյանքը Հիսուսին: Նստած ճոճաթոռին՝ նա մտածեց. *«Հովհաննես 3.16. ես չեմ հասկանում այն, բայց այն օգնեց կորած տղային ապահով զգալ իրեն»* (Հեղինակն անհայտ է):

Այժմ, եթե դուք պատրաստ եք նվիրել ձեր կյանքն Աստծուն՝ ընդունելով Նրա Որդի Հիսուս Քրիստոսին որպես միակ ընդունելի քավություն ձեր մեղքերի համար, ես կոչ եմ անում աղոթել այս աղոթքն ինձ հետ: Բարձրաձայն կրկնե՛ք այն և ուշադրություն

դարձրեք յուրաքանչյուր բառին, որպեսզի հասկանաք այս աղոթքի իմաստը:

*«Հա՛յր Աստված, ես սիրում եմ Քեզ: Այսօր հավատքով գալիս եմ Քո առջև և խնդրում եմ, որ ների իմ մեղքերը: Հիսո՛ւս, ես հավատում եմ Քեզ. ես հավատում եմ, որ Դու մահացար խաչի վրա ինձ համար, որ Դու թափեցիր Քո անմեղ արյունն ինձ համար, և որ Դու զբաղեցրիր իմ տեղը և վերցրիր ամբողջ պատիժը, որին ես արժանի էի: Ես հավատում եմ, որ Դու մահացար և թաղվեցիր և երրորդ օրը հարություն առար մահացածներից: Մահը չկարողացավ պահել Քեզ: Դու հաղթեցիր սատանային և խլեցիր նրանից դժոխքի և մահվան բանալիները: Ես հավատում եմ, որ արեցիր այդ ամենը ինձ համար, որովհետև Դու սիրում ես ինձ: Ես ուզում եմ քրիստոնյա լինել: Ես ուզում եմ ծառայել Քեզ իմ կյանքի բոլոր օրերում: Ես ուզում եմ սովորել, թե ինչպես ապրել այն նոր կյանքը, որը Դու խոստացել ես ինձ: Հիսո՛ւս, ես ընդունում եմ Քեզ հիմա և նվիրում եմ Քեզ իմ կյանքը: Վերցրո՛ւ ինձ այնպիսին, ինչպիսին որ կամ, և դարձրո՛ւ ինձ այնպիսին, ինչպիսին ուզում ես, որ լինեմ:*

*Շնորհակալությո՛ւն, Հիսո՛ւս, ինձ փրկելու հա-*

*մար: Լցրո՛ւ ինձ Քո Սուրբ Հոգով և սովորեցրո՛ւ այն, ինչ պետք է իմանամ: Այժմ ես հավատում եմ, որ փրկված եմ և վերստին ծնված եմ, և որ ես Երկինք եմ գնալու, երբ մահանամ: Հա՛յր Աստված, ես վայելելու եմ իմ ընթացքը և ապրելու եմ Քո փառքի համար»:*

Եթե անկեղծորեն աղոթեցիք այս աղոթքը, դուք կայացրիք ամենակարևոր որոշումը ձեր կյանքում: Անկախ ձեր զգացմունքներից, Աստված լսել է ձեր աղոթքը և պատասխանել է: Դուք կարող եք զգալ խաղաղություն կամ ուրախություն, թեթևություն կամ ազատություն, կամ, միգուցե, բոլորովին ոչինչ չզգաք: Այլևս թույլ մի՛ տվեք, որ ձեր զգացմունքները թելադրեն ձեզ, թե ինչպես ապրեք: Հավատացե՛ք Աստծո Խոսքին, քանի որ Աստված հավատարիմ է Իր խոստումներին: Նա ասել է.

> «Նրանք, ում Հայրը տալիս (վստահում) է Ինձ, կգան Ինձ մոտ, և նրան, ով գա Ինձ մոտ, Ես ոչ մի դեպքում դուրս չեմ անի [Ես երբե՛ք, երբե՛ք չեմ մերժի Ինձ մոտ եկողներից ոչ մեկին]»:
>
> – Հովհաննես 6.37, AMP

Աստված խոստացել է լինել ձեզ հետ ընդմիշտ՝ մինչև այս աշխարհի վերջը: Դուք միշտ չէ, որ կզգաք Նրան, բայց Նա ամենուր է, ամեն ժամանակ: Նրա աչքը մշտապես ձեզ վրա կլինի, և Նա հոգատարությամբ կպահպանի ձեզ: Նա մտահոգված է այն ամենով, ինչով մտահոգված եք դուք, և Նա խոստացել է իրականացնել այդ ամենը ձեր կյանքում: Նա սկսել է բարի գործ ձեզանում և ավարտին կհասցնի այն (տե՛ս Ծննդ. 28.15, Սաղմ. 138.8, Փիլիպ. 1.6):

Շնորհավորո՜ւմ եմ, դուք ունեք նոր լավագույն ընկեր: Խոսքը Հիսուսի մասին է՝ լավագույն ընկերոջ, որ դուք երբևէ կունենաք: Դուք կարող եք խոսել Նրա հետ՝ ինչի մասին կուզեք, որովհետև Նա միշտ հասկանում է ձեզ (տե՛ս Եբր. 4.15): Նա երբեք չի մերժում կամ դատապարտում ձեզ: Չկա մի բան, ինչը չափազանց մեծ է Աստծո համար, ինչպես նաև մի բան, ինչը չափազանց փոքր է: Նա ցանկանում է, որ ճանաչեք Իրեն ձեր բոլոր ճանապարհներում և հրավիրեք Իրեն ձեր կյանքի յուրաքանչյուր բնագավառը:

Դուք դարձել եք նոր ստեղծված. հներն անցան, և ամեն ինչ նոր է (տե՛ս Բ Կորնթ. 5.17): Այժմ դուք ունեք նոր սկիզբ:

Դուք սխալներ կգործեք. բոլորս ենք սխալվում: Դուք շատ բան ունեք սովորելու, և դուք սկսել եք մի ընթացք, որը կշարունակվի ձեր ամբողջ կյանքում: Միշտ հիշեք՝ երբ սխալներ գործեք, դուք կարող եք խնդրել և ստանալ Աստծո ներումը և մաքրումը: Արագորեն ապաշխարե՛ք ցանկացած մեղքից և երբեք մի՛ փորձեք ոչինչ թաքցնել Աստծուց, քանի որ Նա, միևնույն է, գիտի ամեն ինչ:

Աստված անչափ սիրում է ձեզ: Նա մշտապես սիրում է ձեզ: Նա չի սիրում ձեզ ավելի շատ այն օրերին, երբ լավ եք վարվում, և ավելի քիչ այն օրերին, երբ վատ եք վարվում: Նա պարզապես սիրում է ձեզ:

Իսկ հիմա ժամանակն է սովորեցնել ձեզ այս նոր կյանքի մասին:

## Գլուխ 4

# ՆՈՐ ԿՅԱՆՔ

⚜Մուտք գործելով ձեր նոր կյանք, որը պետք է ապրեք Աստծով, Աստծո հետ և Աստծո համար, դուք կբացահայտեք, որ Նրա սկզբունքներից շատերն ասես գլխիվայր լինեն այս աշխարհի ճանապարհների համեմատ: Իրականում, այս աշխարհն է գլխիվայր, իսկ Աստծո Թագավորությունը ճիշտ դիրքում է: Մենք սովոր չենք վարվել Աստծո ճանապարհներով, և սկզբում դրանք հասկանալը կարող է դժվար թվալ:

## Մկրտություն

Առաջին բանը, ինչ դուք պետք է անեք՝ որպես Հիսուս Քրիստոսին նոր հավատացած մարդ, ջրով մկրտվելն է: Մկրտությունը Քրիստոսին հետևելու

ձեր սրտանց որոշման արտաքին նշանն է: Երբ մարդը սուզվում է մկրտության ջրի մեջ, դա խորհրդանշում է նրա հին կյանքի թաղումը: Երբ նրան բարձրացնում են ջրից, դա խորհրդանշում է հարությունը դեպի նոր կյանք: Մենք մկրտվում ենք՝ հնազանդվելով Աստծուն:

> «Եվ մկրտությունը, որն օրինակ է [նրանց փրկության], այժմ նույնպես փրկում է ձեզ [ներքին հարցերից և վախերից], ոչ թե հեռացնելով դրսի մարմնի կեղտը [լողանալը], այլ [տալով ձեզ] բարի և պարզ խղճի (ներսի մաքրության և խաղաղության) պատասխանն Աստծո առջև [քանի որ դուք ցույց եք տալիս, որ ձերն եք համարում այն, ինչին հավատում եք] Հիսուս Քրիստոսի հարության միջոցով»:
>
> – Ա Պետրոս 3.21, AMP

> «Եվ Պետրոսը պատասխանեց նրանց՝ ապաշխարե՛ք (փոխեք ձեր հայացքները և նպատակը, որպեսզի ընդունեք Աստծո կամքը ձեր անձերում՝ այն մերժելու փոխարեն) և մկրտվե՛ք՝ յուրաքանչյուրդ, Հիսուս Քրիստոսի անունով, ձեր մեղքերից

ներվելու և ազատվելու համար, և դուք կստանաք Սուրբ Հոգու պարգևը»:

– Գործք 2.38, AMP

## Եկեղեցի հաճախելը

Եվս մեկ բան, ինչը լրջորեն խորհուրդ եմ տալիս ձեզ, տեղական եկեղեցական ընտանիքի անդամ դառնալն է: Եկեղեցի հաճախելը մարդուն քրիստոնյա չի դարձնում նույնքան, որքան իմ ավտոտնակում նստելն ինձ ավտոմեքենա չի դարձնում: Մենք քրիստոնյա չենք դառնում պարզապես եկեղեցի հաճախելով, բայց եթե քրիստոնյա ենք, պետք է ցանկանանք երկրպագել Աստծուն և շփվել այլ հավատացյալների հետ: Եկեղեցին նույնպես այնպիսի վայր է, որտեղ սովորում ենք Աստծո Խոսքը:

Ոչ բոլոր եկեղեցիներն են լավը: Մի քանիսը կրոնական կառույցներ են, որոնք արտաքուստ լավ տեսք ունեն, սակայն դրանց ներսում տեղի չի ունենում ոչինչ, ինչն իրականում կարող է օգնել մարդկանց: Եթե դուք հաճախում եք այնպիսի եկեղեցի, որը չի կերակրում ձեզ Աստծո Խոսքով և չի դրդում ձեզ աճել Աստծո հետ ձեր ընթացքի մեջ ամեն օր, շարունակե՛ք փնտրել, մինչև կգտնեք այդպիսին:

Եկեղեցիները նման են բժիշկների. բոլորը չէ, որ լավն են, բայց նույնպես, բոլորը չէ, որ վատն են: Դուք պարզապես պետք է գտնեք այնպիսին, որը համապատասխանում է ձեզ: Ոմանք գերադասում են մեծ եկեղեցի, իսկ ոմանք՝ ավելի փոքր: Որոշ մարդիկ նախընտրում են որևէ հարանվանություն ավելի, քան մյուսները, և կան մարդիկ, որոնք գերադասում են ոչ հարանվանական եկեղեցի, ինչը պարզապես նշանակում է, որ այդ եկեղեցիներն ավելի խոշոր եկեղեցական մարմնի մաս չեն: Գլխավոր իմաստն այն է, որ եկեղեցին կօգնի ձեզ, եթե դուք հետևողականորեն հաճախեք հավաքույթների: Դա թույլ կտա ձեզ ձեռք բերել ընկերներ, որոնք ունեն նույն համոզմունքները, և շփվել մարդկանց հետ այնպիսի բարոյական մակարդակի վրա, որը կօգնի ձեզ խուսափել այս աշխարհի գայթակղություններից:

Անպայման հաճախեք այնպիսի եկեղեցի, որտեղ կզգաք, որ աճում եք՝ որպես քրիստոնյա: Նորահավատի համար անչափ կարևոր է շատ բան սովորելը: Եթե նա չի սովորում և չունի առաջընթաց, նա նահանջելու կամ իր հին ճանապարհներին վերադառնալու վտանգի մեջ է:

Աստվածաշնչի ուսումնասիրության փոքր խմբերն

անչափ օգտակար են նորահավատների համար: Փոքր խմբերում դուք սովորաբար հնարավորություն ունեք սովորել, հարցեր տալ, աղոթք ստանալ և մասնակցել աղոթքների այլ մարդկանց համար: Հուսով եմ՝ ձեր եկեղեցում կլինեն աստվածաշնչյան դասեր կամ տնային խմբակներ մեծահասակների համար, որոնցում դուք կարող եք մասնակցություն ունենալ: Եկեղեցին ընդամենը այնպիսի վայր չէ, որտեղ մեզ ծառայելու են. եկեղեցին այնպիսի վայր է, որտեղ մենք պետք է գտնենք մեր ծառայությունը Քրիստոսի մարմնում (եկեղեցում) և կատարենք այն. մարդկանցից ինչ-որ բան ստանալուց բացի, դուք պետք է տաք մարդկանց ինչ-որ բան:

## Հետևողականություն

Հետևողականությունն անչափ կարևոր է: Մեր կյանքը վերածվել է խառնաշփոթի ոչ թե մեկ անգամ գործած սխալի, այլ տևական ժամանակ սխալ վարվելու պատճառով: Եվ մեկ կամ երկու անգամ ճիշտ վարվելը չի օգնի մեզ ապրել այն նոր կյանքով, որն Աստված պատրաստել է մեզ համար: Մենք պետք է հետևողական լինենք: Աստված տվել է ձեզ զսպվածության և զգաստության հոգի (տե՛ս Բ Տիմոթ. 1.7),

և դուք պարզապես պետք է գործադրեք այն:

Հետևողականորեն ժամանակ անցկացրեք Աստծո հետ: Ուսումնասիրե՛ք Նրա Խոսքը և կարդացե՛ք գրքեր, որոնք կօգնեն ձեզ է՛լ ավելի հասկանալ Աստվածաշունչը: Լսե՛ք ուսուցողական ժապավեններ և լսասկավառակներ, կամ դիտե՛ք լավ քրիստոնեական հեռուստատեսային հաղորդումներ: Ժամանակ հատկացրեք աղոթքի համար: Սովորե՛ք աղոթել ամբողջ օրվա ընթացքում: Հիշեք՝ Աստված հետաքրքրված է այն ամենով, ինչը մտահոգում է ձեզ, և աղոթքը պարզապես զրույց է Աստծո հետ: Աճելով որպես քրիստոնյա՝ դուք կսովորեք ոչ միայն զրուցել Աստծո հետ, այլև լսել Նրանից, և դա ձեր ընթացքը կտեղափոխի Նրա հետ նոր ոգեշնչող հարթության վրա:

Եվս մեկ անչափ կարևոր բնագավառ, որը հետևողականություն է պահանջում. կատարել զոհաբերություններ և նվիրատվություններ: Աստված այնքա՜ն շատ բան է տվել մեզ, որ բնական է, որ մենք ցանկանում ենք ի պատասխան ինչ-որ բան տալ Նրան և Նրա գործի համար: Երբ ձեզ օգնում են, բնական է, որ դուք նույնպես ցանկանում եք օգնել մարդկանց, և դա անելու միջոցներից մեկը հետևողականորեն նվիրատվություններ կատարելն է

ձեր եկեղեցուն և այլ ծառայությունների, որոնք օգնել են ձեզ, և որոնց դուք վստահում եք: Աստված բազմապատիկ վերադարձնում է այն, ինչ տալիս ենք Նրան: Նրա Խոսքն ասում է, որ մենք հնձում ենք այն, ինչ ցանում ենք:

Մինչև Քրիստոսին ընդունելը և Նրանում նոր ստեղծված դառնալը, մենք լրջորեն հետաքրքրված չէինք ինչ-որ բան տալու մեջ: Մենք եսասեր էինք և ինքներս էինք ցանկանում ինչ-որ բան ստանալ մարդկանցից: Այնուամենայնիվ, մեր սիրտը փոխվում է, երբ մենք ավելի խորն ենք սիրահարվում Հիսուսին:

## Մկրտություն Սուրբ Հոգով

Մկրտելը նշանակում է ամբողջովին ընկղմել: Ցանկացած բան, ինչն ընկղմված է, լցվում է, եթե դրանում բաց տեղ կա: Եթե դուք բաց եք, կարող եք ամբողջովին լցվել Սուրբ Հոգով: Դուք ստացաք Սուրբ Հոգուն, երբ ընդունեցիք Հիսուսին որպես ձեր Փրկչի, բայց հնարավոր է, որ դեռևս պատրաստ չեք լիովին բացել ձեր սիրտը և թույլ տալ Նրան ամբողջությամբ լցնել ձեզ:

Սուրբ Հոգին ձեր մեջ է, բայց դուք պետք է շահագրգռված լինեք, որ Նա լիարժեք կերպով տիրի

ձեր կյանքին: Աստված ցանկանում է գործածել ձեզ, որպեսզի ծառայեք Իրեն, և ձեզ անհրաժեշտ է Նրա Հոգու զորությունը՝ հաջողակ և արդյունավետ լինելու համար:

Աստված նույնպես առաջարկում է մեզ գերբնական պարգևներ (օժտվածություն գերբնական զորությամբ), որոնց նպատակը մեր առօրյա կյանքում մեզ օգնելն է: Այս պարգևները տարբեր են, և դրանք տրվում են բոլորին, սակայն յուրաքանչյուրի կյանքում որոշ պարգևներ կարող են լինել ավելի արտահայտված, քան մյուսները: Իմ պարգևը սովորեցնելն է. այլ մարդիկ օժտված են երաժշտության կամ կառավարման բնագավառում, գթության կամ օգնության գործերի մեջ: Առաջին Կորնթացիների 12.7-10-ը թվարկում է ինը պարգև, որոնց պետք է տեղյակ լինենք: Իրականում, Աստվածաշունչը սովորեցնում է, որ նախանձավոր լինենք այս պարգևների համար (սաստիկ կերպով ցանկանանք): Այս պարգևներն են՝ գիտության խոսքը, իմաստության խոսքը, հավատքի պարգևը, բժշկության պարգևները, հրաշքներ գործելը կամ զորությունների ներգործությունները, մարգարեությունը (Աստծո կամքը և մտադրությունը մեկնելը), բարի և չար հոգիների միջև զանազանելու կարողությունը, այլևայլ լեզու-

ներով խոսելու պարգևը և այդ լեզուները թարգմանելու կարողությունը:

Նույնիսկ եթե դուք չունեք պատկերացում այս պարգևների մասին, ես խրախուսում եմ, որ խնդրեք Աստծուն տալ ձեզ դրանք և սովորեցնել դրանց բնույթի և ճիշտ գործածության մասին: Աստծո Խոսքում տեսնում ենք բազմաթիվ դեպքեր, երբ մարդիկ խոսում են անհայտ լեզուներով (հոգևոր լեզվով): Երբ աղոթում ենք լեզուներով, մենք գաղտնիքներ և խորհուրդներ ենք խոսում Աստծուն, և կառուցում ու բարելավում ենք ինքներս մեզ: Պողոս առաքյալն ասաց, որ ցանկանում է, որ բոլորը խոսեն լեզուներով (տե՛ս Ա Կորնթ. 14.2,4,5):

Մասնավորապես, լեզուների պարգևը տարիներ շարունակ եղել է տարաձայնությունների պատճառ քրիստոնյաների մեջ: Ոմանք հավատում են, որ լեզուները մեր օրերի համար են, իսկ մյուսները չեն հավատում: Ես անձամբ վերապրել եմ այս պարգևն իմ կյանքում և խոսում եմ լեզուներով ավելի քան երեսուն տարի: Այնպես որ, գիտեմ, որ դա վերաբերում է ժամանակակից քրիստոնյաներին: Մեզ անհրաժեշտ է այն, ինչը կօգնի մեզ:

Շատ հաճախ մարդիկ մերժում են այն, ինչ իրենք չեն վերապրել կամ չեն հասկանում: Դա սխալ է:

Մենք պետք է կարդանք Աստվածաշունչը և հավատանք այն ամենին, ինչ այն սովորեցնում է:

Ես զգուշացնում եմ ձեզ, որ կենտրոնանաք անձամբ Սուրբ Հոգու վրա, ոչ թե Նրա պարգևների: Պարգևները կգան: Որոշ մարդիկ չափից ավելի են շեշտադրում լեզուները կամ մյուս պարգևները: Երբ մենք գնում ենք խանութ՝ կոշիկ գնելու, չենք խնդրում մի զույգ լեզվակ: Մենք կոշիկ ենք խնդրում և ստանում ենք լեզվակները մի զույգ կոշիկի հետ: Նույնը վերաբերում է Սուրբ Հոգուն: Ամեն օր խնդրեք, որ Նրա ներկայությունն ավելանա ձեր կյանքում, և լեզուները, ինչպես և մյուս պարգևները, կգան ճիշտ ժամանակին:

## Փնտրե՛ք Աստծո ներկայությունը, ոչ թե Նրա պարգևները

Աստված ցանկանում է բարի բաներ անել ձեզ համար: Նա ցանկանում է տալ ձեզ բազում օրհնություններ, բայց կարևոր է, որ դուք փնտրեք Աստծուն հենց Իր համար, ոչ թե այն ամենի, ինչ Նա կարող է տալ ձեզ: Աստված զարմանալի և անզուգական է, և Նրա ներկայության մեջ լինելը աներևակայելի է: Երբ փնտրեք Նրա երեսը, կբացահայտեք, որ Նրա ձեռքը միշտ բաց է: Եթե դուք միայն փնտրում եք

Նրա ձեռքը, դա վիրավորում է Նրան: Ոչ ոք, նույնիսկ Աստված, չի ցանկանում լինել օգտագործված՝ որևէ մեկի անձնական շահի համար:

Խնդրե՛ք Աստծուց այն, ինչ ցանկանում եք կամ ինչի կարիքն ունեք, և եթե դա լավագույնն է ձեզ համար, ժամանակին Նա կտա դա ձեզ: Բայց միշտ հիշեք, որ ավելի շատ ձեզ պետք է, որ Նա առավել ներկա լինի ձեր կյանքում, որ ձեր կյանքում ավելանա Նրա ներկայությունը, Նրա ճանապարհները, Նրա բնավորությունը, Նրա իմաստությունը, Նրա միտքը, Նրա զորությունը:

Աստված ամեն ինչ է, և մենք ոչինչ ենք՝ առանց Նրա: Հիսուսն ասաց. «Առանց Ինձ չեք կարող ոչինչ անել» (Հովհաննես 15.5):

> «Որովհետև Նրանից և Նրա միջոցով և դեպի Նա է ամեն ինչ [Որովհետև ամեն ինչ ծնվում է և բխում է Նրանից. ամեն ինչ ապրում է Նրա միջոցով, և ամեն ինչ կենտրոնանում է ու ձգտում է հասնել վախճանին և ավարտվել Նրանում]: Նրան փա՜ռք լինի հավիտյան: Ամե՛ն (թող այդպես լինի)»:
>
> – Հռոմեացիների 11.36, AMP

# Սովորելու շատ բան կա

Կա ավելին, որ դուք պետք է սովորեք, քան այն, ինչով ես կիսվելու եմ ձեզ հետ այս գրքում: Դուք պետք է սովորեք այն վարդապետությունը, որի վրա հիմնված է ձեր հավատքը և քրիստոնեության հիմքային ուսմունքները: Որպես կանոն, շատ եկեղեցիներում կան դասեր նորահավատների համար, և ես խորհուրդ եմ տալիս ձեզ անպայման հաճախել: Դուք կսովորեք, որ Հիսուսը ծնվեց կույսից: Ես գիտեմ՝ դա անհնարին է թվում, սակայն դա ճշմարտություն է, և կարևոր է, որ հասկանաք դրա պատճառը: Դուք կսովորեք, որ կարևոր է ֆինանսական զոհաբերություններ տալ Աստծուն, որպեսզի Ավետարանը քարոզվի այլ մարդկանց, որոնք դեռ չեն ճանաչում Նրան: Դուք կսովորեք Երրորդության մասին՝ ճշմարտությունն այն մասին, որ մենք ծառայում ենք մեկ Աստծո, որը հայտնվում է երեք Անձով՝ որպես Հայր, Որդի և Սուրբ Հոգի: Դուք կսովորեք հրեշտակների ծառայության մասին, Հիսուսի անվան կարևորության մասին, այն մասին, թե ինչպես լսել Աստծուն, արդարության վարդապետության մասին, ապաշխարության մասին, ինչպես նաև այլ բաների մասին:

Թեև չեմ կարող պատմել ձեզ այդ ամենը այս գրքի մեջ, բայց կան որոշ բաներ, որոնցով ցանկանում եմ կիսվել: Ես հավատում եմ, որ դրանք առաջնահերթ են ձեր նոր կյանքի համար: Այնպես որ, եկեք շարունակենք:

# *Գլուխ 5*

## ՆՈՐ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ

⚜Անչափ կարևոր է, որ սովորեք մտածել լիովին նոր ձևով: Աստված ունի բարի ծրագիր ձեզ և ձեր կյանքի համար, բայց դուք պետք է համաձայնեք Նրա հետ այդ ծրագրի վերաբերյալ: Սատանան նույնպես ունի ծրագիր ձեզ համար, և նրա ծրագիրը բարի չէ: Գողը (սատանան) գալիս է միայն գողանալու, սպանելու և կործանելու (տե՛ս. Հովհ. 10.10): Սատանան տալիս է մեզ տարատեսակ սխալ մտքեր՝ հուսալով, որ մենք կհավատանք դրանց և դրանով իսկ կհամաձայնենք նրա հետ: Նա հենց այսպես է խաբում մարդկանց և մուտք գործում նրանց կյանք:

> «Մի՛ համապատասխանեք այս աշխարհին [ընդունելով դրա կերպարանքը և հարմարվելով դրա արտաքին մակերեսային սովորույթներին], այլ վերափոխվեք

(փոխվեք)՝ [ամբողջովին] նորոգելով ձեր միտքը [իր նոր իդեալներով և նոր վերաբերմունքով], որպեսզի հաստատ համոզվեք [ինքներդ], թե որն է Աստծո բարի, հաճելի և կատարյալ կամքը՝ այն, ինչը բարի, հաճելի և կատարյալ է [Նրա առջև՝ ձեզ համար]»:

– Հռոմեացիների 12.2, AMP

Այս աստվածաշնչյան Խոսքը հստակ ցույց է տալիս, որ մեր կյանքը չի կարող փոխվել, քանի դեռ չի փոխվել մեր մտածելակերպը: Եթե ցանկանում եք ունենալ նոր կյանք, դուք պետք է ունենաք նոր մտածելակերպ: Աստված բարի ծրագիր ունի մեզնից յուրաքանչյուրի համար, բայց Նա կիրագործի այն, երբ մենք սովորենք ճիշտ մտածելու կարևորությունը:

## Դուք կարող եք վերահսկել ձեր մտքերը

Մինչդեռ դուք այնպիսին եք, ինչպիսին ես էի անցյալում. դուք մտածում եք, որ չեք կարող ազդել ձեր մտքերի վրա: Դա ճիշտ չէ: Դուք կարող եք որոշել, թե ինչի մասին մտածեք, և ինչի մասին՝ ոչ, և պետք է անեք դա զգուշությամբ: Մարդը հետևում է իր

մտքին: Բոլորիս մոտ է եղել, որ սկսել ենք մտածել ինչ-որ բան ունելու մասին, օրինակ՝ պաղպաղակ, փքաբլիթ կամ այլ տեսակի գայթակղիչ կերակուր, և որքան ավելի ենք մտածել այդ մասին, այնքան ավելի վճռական ենք դարձել, որ պետք է ունենք դա: Եթե մենք բավականաչափ երկար պահենք դա մեր մտքում, նույնիսկ կարող ենք մեքենա նստել և գնալ մի քանի կիլոմետր՝ դա գնելու համար, թեև հետագայում կզղջանք, որ կերանք դա և դրա վրա ծախսեցինք մեր ժամանակն ու փողը:

Եթե ինչ-որ մեկը սխալ է վարվել մեզ հետ, և մենք շարունակ մտածում ենք նրա արարքի մասին, որը ցավ է պատճառել մեզ, մենք բարկություն և վրդովմունք կզգանք: Մեր մտքերն ազդում են մեր զգացմունքների վրա և դառնում են այն խոսքերը, որոնք մենք խոսում ենք:

Հաջորդ անգամ, երբ պարզեք, որ բարկացած և ընկճված եք, պարզապես հարցրեք ձեզ, թե ինչի՞ մասին էիք մտածում, և դուք կապ կտեսնեք ձեր մտքերի և զգացմունքների միջև:

Մեր միտքն այն պատերազմական դաշտն է, որտեղ պայքար ենք մղում սատանայի դեմ: Երկրորդ Կորնթացիների 10.4,5-ը սովորեցնում է, որ

մենք պետք է քանդենք ամեն սխալ միտք և խորհուրդ՝ հնազանդեցնելով դրանք Հիսուս Քրիստոսին: Սա նշանակում է, որ մենք պետք է մտածենք համաձայն Աստծո Խոսքի: Ցանկացած բան, ինչը չի համապատասխանում Քրիստոսի ուսմունքներին, պետք է հեռացվի մեր մտքից և մերժվի՝ որպես սուտ սատանայից: Եթե ձեր թշնամին (սատանան) կարողանա վերահսկել ձեր միտքը, նա կկարողանա վերահսկել ձեր կյանքը և ապագան:

Օրինակ, եթե դուք մտածում եք ինքնասպանության մասին, Աստված չէ, որ տալիս է ձեզ այդ մտքերը: Նա ցանկանում է, որ դուք ապրեք և վայելեք ձեր կյանքը: Եթե դուք մտածում եք, որ ոչնչի պիտանի չեք, և որ ոչ ոք չի սիրում ձեզ, այդ մտքերն Աստծուց չեն, քանի որ դրանք չեն համապատասխանում Նրա Խոսքին:

## Բացասական մտածելակերպ

Զգուշացե՛ք ցանկացած տեսակի բացասական մտքերից: Աստծո մեջ և այն ծրագրի մեջ, որը Նա ունի ձեր կյանքի համար, չկա ոչ մի բացասական բան: Ավելի լավ է մտածել, որ բաժակը կիսով չափ լիքն է, քան՝ որ այն կիսով չափ դատարկ է: Դրա-

կան վերաբերմունք ունենալը երբեք ոչ ոքի չի վնասել:

Անկախ այն բանից, թե ինչպիսին է եղել ձեր կյանքը մինչև հիմա, դուք պետք է դրական տեսիլք ունենաք ձեր ապագայի մասին: Համաձայնեք Աստծո հետ և հավատացեք, որ ձեզ հետ լավ բաներ են կատարվելու: Եթե դուք բացասական մարդ եք եղել, ինչպես ես՝ մի ժամանակ, դրականորեն մտածելը որոշակի ջանք կպահանջի ձեզնից: Ես մեծացել եմ շատ բացասական միջավայրում: Մշտապես փորձանքի կամ դժբախտության էի սպասում, բայց հետագայում հասկացա, որ իրականում մեր փորձանքները կարող են գալ հենց մեր բացասական մտքերից:

> «Հուսահատ և տառապյալ մարդու բոլոր օրերը չար են [անհանգիստ մտքերով և կանխազգացումներով], բայց նա, ով ուրախ սիրտ ունի, շարունակական խնջույքի մեջ է [անկախ հանգամանքներից]»:
>
> – Առակաց 15.15, AMP

Առաջին անգամ, երբ Սուրբ Հոգին ցույց տվեց ինձ այս խոսքը, ես ուշադրություն դարձրի «կան-

խազգացումներ» բառի վրա: Այն նշանակում է բացասական և վախով լի մտքեր այն մասին, որ ինչ-որ վատ բան է տեղի ունենալու: Ես նույնպես պետք է խոստովանեի, որ շատ անգամներ ստանում էի այն, ինչին սպասում էի, այսինքն՝ խնդիրներին: Ես ցանկանում էի, որ իմ կյանքը փոխվեր, և չէի հասկանում, թե ինչու Աստված չէր փոխում այն, բայց, ի վերջո, հասկացա, որ պետք է փոխեմ իմ մտածելակերպը, մինչև որ Նա կփոխեր իմ կյանքը:

Մի՛ եղեք բացասական ոչ մի բանի նկատմամբ... ո՛չ ձեր ապագայի, ո՛չ էլ, նույնիսկ, ձեր անցյալի: Ձեր անցյալը կարող է դառնալ այն ծրագրի մասը, որն Աստված որոշել է ձեզ համար, եթե վստահեք Աստծուն: Այն սխալները, որոնք գործել եք, կարող են ավելի լավ և իմաստուն մարդ դարձնել ձեզ: Դուք կարող եք սովորել դրանցից և որոշել այլևս չգործել դրանք: Մի՛ եղեք բացասական ձեր ֆինանսների, ընկերների, ընտանիքի, արտաքինի, ձեր ունեցած կամ չունեցած աշխատանքի, ձեր բնակավայրի, մեքենայի և ցանկացած այլ բանի նկատմամբ: Ձևավորե՛ք դրական վերաբերմունք, և դա կօգնի ձեզ դրական և ազդեցիկ կյանք ունենալ:

## Մի՛ անհանգստացեք և մի՛ մտահոգվեք

Անհանգստությունը և մտահոգությունը բացասական մտածելակերպի երկու տեսակ են: Անհանգստությունը ոչ մի օգուտ չի տալիս, բայց կարող է մեծ վնաս հասցնել: Դադարե՛ք անհանգստանալ և վստահ եղեք, որ Աստված կհոգա ձեր կարիքները: Անհանգստությունն ավելի տարեց տեսք է հաղորդում ձեզ, առաջացնում է գլխացավեր և աղիքային խնդիրներ, նույնիսկ խանգարում է հաշտ լինել մարդկանց հետ: Դա Աստծո կամքը չէ ձեզ համար:

Սկզբում չանհանգստանալը կարող է դժվարությամբ տրվել, քանի որ դուք սովորել եք ինքներդ հոգ տանել ձեր մասին և որոշել ձեր ապագան, բայց հիշե՛ք, որ այժմ դուք սովորում եք ապրել նոր ձևով:

Մարդիկ, որոնք չունեն հարաբերություններ Աստծո հետ, կարող են մտածել, որ իրենք պետք է անհանգստանան, բայց դա չի վերաբերում ձեզ: Աստված ձեր կողմից է, և Նա ասում է, որ դուք կարող եք գցել ձեր հոգսերն Իր վրա, և Ինքը կհոգա ձեր մասին (տե՛ս Ա Պետր. 5.7):

Անհանգստությունը նշանակում է, որ մենք վատնում ենք մեր ներկան՝ մտահոգվելով ապագայի մա-

սին: Հիսուսը պատվիրեց չանել դա, քանի որ ամեն օրվա հոգսը բավական է իր համար (տե՛ս Մատթ. 6.34): Դուք կիմանաք, թե ինչ անեք, երբ գա ժամանակը, բայց, հավանաբար, մինչ այդ ոչինչ չեք իմանա: Աստված ցանկանում է, որ սովորեք վստահել Իրեն: Նա երբեք չի ուշանում, բայց ժամանակից շուտ էլ չի գալիս: Նորահավատի համար սպասելը դժվար է, քանի որ դուք սովոր չեք դրան: Այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց դա ձեզ դուր կգա: Ձեր միտքը խաղաղ կլինի, և դուք կապրեք ազատ ու լիարժեք ամեն օր՝ առանց անհանգստանալու վաղվա համար:

Ամեն անգամ, երբ անհանգստանալու գայթակղությունը գալիս է, պարզապես հիշեցրեք սատանային, որ դուք Աստծո զավակ եք, և որ Նա խոստացել է հոգալ ձեր մասին:

Որպեսզի նորոգեք ձեր միտքը, դուք պետք է ուսումնասիրեք Աստծո Խոսքը և մտորեք դրա շուրջ: Այն սովորեցնում է մեզ տարբերել ճիշտ մտածելակերպը՝ սխալից: Օրինակ, ինչ-որ մեկը կարող է մտածել, որ ինքը պետք է աղքատ լինի ամբողջ կյանքում, միայն որովհետև իր ընտանիքը միշտ աղքատ է եղել, բայց դուք կբացահայտեք Աստծո

Խոսքում, որ դա ճիշտ չէ: Աստծո օգնությամբ և կիրառելով Նրա սկզբունքները ձեր ֆինանսական կյանքում, դուք կարող եք քանդել աղքատության շղթան և ունենալ ավելին, քան բավական է ձեր կյանքի ամեն բնագավառի համար: Աստծո Խոսքն ասում է, որ ամեն ինչից առավել Նա ցանկանում է, որ դուք բարգավաճեք և առողջ լինեք, ինչպես որ ձեր անձն է բարգավաճում (տե՛ս Գ Հովհ. 2): Որքան ավելի հասունանաք ձեր անձում և հնազանդվեք Աստծուն, այնքան Նա կտա ձեզ այս կյանքի բարիքները, որոնք կկարողանաք ճիշտ տնօրինել և օգտագործել իմաստուն ձևով:

Աստված կհոգա ձեր կարիքները, և դուք ստիպված չեք լինի ապրել վախի մեջ: Եթե ձեզ աշխատանք է հարկավոր, դուք կարող եք աղոթել, և Նա կօգնի ձեզ աշխատանք գտնել: Նա կտա ձեզ բարեհաճություն և այնպես կանի, որ այն, ինչին դիպչեք, բարգավաճի և հաջողվի:

Հիսուսը ցանկանում է, որ դուք լավ կյանք ունենաք: Նա մահացել է՝ ձեզ կյանք տալու համար, և ցանկանում է, որ դուք վայելեք այն: Ձեռք բերեք գիտելիք, հասկացողություն, զանազանություն և խոհեմություն: Առանց գիտելիքի մարդիկ կործան-

վում են. այնպես որ, խնդրե՛ք այն: Հիսուս Քրիստոսը՝ Աստծուց մեզ տրված իմաստությունն է (տե՛ս Ա Կորնթ. 1.30): Խնդրե՛ք Նրան, որ ձեզանում գտնվող իմաստությունն ի հայտ գա և լուսավորի ձեր միտքը, որպեսզի քայլեք Նրա ճանապարհներով: «Որովհետև հմուտ և աստվածապաշտ Իմաստությունն ավելի լավ է, քան հակինթը և մարգարիտները, և ոչ մի ցանկալի բան չի կարող համեմատվել դրա հետ» (Առակաց 8.11, AMP):

Ես գրել եմ մի հանրաճանաչ գիրք, որը կոչվում է *«Միտքը կռվի դաշտն է»:* Խորհուրդ եմ տալիս հնարավորինս շուտ կարդալ այն: Հիշեք՝ որոշ ժամանակ ձեր միտքը նորոգելը կարող է նման լինել պայքարի, բայց մի՛ հանձնվեք: Աստծուն ջանասիրաբար փնտրողները կվարձատրվեն:

# Գլուխ 6

# ՆՈՐ ԽՈՍԵԼԱՈՃ

⚜ Բառերն ուժ ունեն: Դրանք կրում են կա՛մ ստեղծարար, կա՛մ կործանարար ուժ: Սկզբում, երբ Աստված խոսեց, Նա ստեղծեց բարի բաներ, և մենք պետք է հետևենք Նրա օրինակին:

> «Մարդու [բարոյական] անձը պետք է լցված լինի իր բերանի պտղով, և իր բառերի հետևանքներով նա պետք է կշտանա [թե՛ բարի, թե՛ չար]:
>
> Մահը և կյանքը լեզվի իշխանության մեջ են, և ովքեր թույլ են տալիս իրենց տարվել դրանով, կուտեն դրա պտուղը [մահվան կամ կյանքի]»:
>
> – Առակաց 18.20,21, AMP

Սուրբ գրքի մանրակրկիտ ուսումնասիրությունը

հստակ ցույց է տալիս, որ մեր բառերը հետևանքներ ունեն՝ բարի կամ չար: Երբ բացում ենք մեր բերանը՝ խոսելու համար, պետք է գիտակցենք, որ մեր խոսքը զորություն ունի: Մեր մտքերը վերածվում են խոսքի, և սա գլխավոր պատճառներից է, թե ինչու է սատանան բացասական մտքեր տալիս մեզ: Նա գիտի, որ եթե մենք ընդունենք այդ մտքերը՝ համարելով դրանք մերը, ի վերջո կխոսենք, և դրանք դուռ կբացեն, որ նա կատարի իր կեղտոտ գործերը մեր կյանքում:

> «Նա, ով հսկում է իր բերանը և իր լեզուն, պահում է իրեն փորձանքներից»:
>
> – Առակաց 21.23, AMP

Այս աշխարհի մեծագույն գայթակղությունն այն է, որ խոսենք այն, ինչ տեսնում և զգում ենք, բայց Աստված ցանկանում է, որ մենք խոսենք այն, ինչ կարող ենք ունենալ՝ համաձայն Իր Խոսքի: Ես չեմ առաջարկում, որ դուք անտեսեք ձեր հանգամանքները, այլ ասում եմ, որ դուք կարող եք հաղթահարել դրանք, և այն, թե ինչպես եք խոսելու ձեր խնդիրների ժամանակ, մեծ կապ ունի դրա հետ:

Իսրայելցիները պետք է տասնմեկ օրվա ճանա-

պարի անցնեին, սակայն անցկացրին անապատում քառասուն տարի: Նրանք շարունակ պտտվում էին միևնույն սարերի շուրջ՝ առանց որևէ առաջընթացի: Նրանք շատ խնդիրներ ունեին, և նրանց մեծագույն խնդիրներից մեկը տրտունջն էր: Նրանք փնթփնթում և տրտնջում էին ամեն անգամ, երբ ինչ-որ բան իրենց ուզածով չէր լինում: Աստված ցանկանում է, որ մենք փառաբանենք և գովաբանենք Իրեն թե՛ անապատում, թե՛ բարձունքներում: Այն, թե ինչ ենք մենք ասում նեղության մեջ, որոշում է, թե որքան ժամանակ կմնանք դրանում:

Այն, ինչ ես կասեմ, կարող է տարօրինակ թվալ, բայց ձեր խոսքը զորություն ունի: Հռոմեացիների 4.17-ում գրված է, որ մենք ծառայում ենք այնպիսի Աստծո, Ով գոյություն չունեցող բաները անվանում է գոյություն ունեցողի պես: Աստված խոսում է այն մասին, ինչ Ինքը ցանկանում է, այնպես, ասես դա արդեն տեղի է ունեցել: Այսպես վարվելու համար դուք պետք է նայեք հավատքի աչքերով: Հավատքը իրականություն է համարում այն, ինչը դեռ չի տեսնում և չի զգում նյութական աշխարհում: Հավատքն ընդունում է Աստծո խոստումները և այնպես է վարվում, ասես դրանք արդեն կատարվել են:

Եթե մենք ինչ-որ խնդիր ունենք և ճշմարտապես հավատում ենք, որ Աստված կազատի մեզ դրանից, կարող ենք երջանիկ լինել հիմա: Կարիք չկա, որ սպասենք, մինչև փոփոխությունը կտեսնենք, քանի որ հավատքով մենք արդեն ստացել ենք այն: Մեր սրտի խորքում գիտենք, որ Աստված գործում է մեր օգտին:

Նայելով շուրջը, Եզեկիել մարգարեն տեսնում էր միայն մահացած չոր ոսկորներ, և Աստված հարցրեց նրան, թե արդյո՞ք դրանք կարող են կենդանանալ: Եզեկիելը պատասխանեց. «Աստվա՛ծ, միայն Դու գիտես»: Ի պատասխան՝ Աստված հանձնարարեց նրան մարգարեանալ (խոսել) այդ ոսկորներին և պատվիրել դրանց լսել Տիրոջ Խոսքը: Եզեկիելը սկսեց մարգարեանալ՝ համաձայն իր ստացած պատվերի, և այդ ոսկորները միացան: Դրանք ծածկվեցին մկաններով ու ջլերով և կանգնեցին՝ որպես զորավոր բանակ (տե՛ս Եզեկ. 37): Աստծո Խոսքի զորության ինչպիսի՜ մեծ օրինակ:

## Աստծո Խոսքը բարձրաձայն խոսելը

Ես ամենուր սովորեցնում եմ մարդկանց բարձրաձայն խոսել Աստծո Խոսքը և անել դա նպատակաուղղված՝ որպես իրենց ամենօրյա հոգևոր կար-

գապահության մաս: Դա ամենակարևոր բաներից է, որ Աստված սովորեցրել է ինձ, և կարող եմ ասել, որ դա օգնել է ինձ նորոգել իմ միտքը և արմատապես փոխել իմ կյանքը:

Աստծո Խոսքը Հոգու թուրն է: Այն մեծագույն զենքն է սատանայի դեմ, որը դուք ունեք: Նա վախենում և դողում է Աստծո Խոսքից: Ղուկասի 4-րդ գլխում տեսնում ենք, որ Հիսուսը փորձվում էր սատանայից: Նա անապատում էր: Նա որոշ ժամանակ ոչինչ չէր կերել, և սատանան սկսեց մտքեր տալ Նրան: Ամեն անգամ, երբ սատանան ստում էր Հիսուսին, Հիսուսը պատասխանում էր. «Գրվա՛ծ է», իսկ հետո բարձրաձայն մեջբերում էր որևէ սուրբգրային հատված, որը հերքում էր նրա ասած սուտը: Երբ սովորենք հետևել Նրա օրինակին, մենք կքայլենք դեպի մեր հաղթանակը:

Դուք պատրա՞ստ եք հետևել այն բանին, թե ինչ եք խոսում: Այդ դեպքում կհայտնաբերեք, որ դուք, ինչպես և մյուսները, ասում եք շատ բաներ, որոնք ոչ մի դեպքում չեք ցանկանա, որ կատարվեն ձեր կյանքում: Ես համոզված եմ, որ մենք կարող ենք ավելացնել կամ պակասեցնել մեր խաղաղության և ուրախության չափը պարզապես այն բանով, թե

ինչ ենք խոսում: Եվ եթե ես ճիշտ եմ, ինչո՞ւ չասել այնպիսի բան, ինչը կուրախացնի ձեզ՝ տխրեցնելու փոխարեն:

Հավատքով խոսելը ձեր նոր կյանքի մասն է. այնպես որ, սկսեք անել դա հիմա: Դուք կարող եք հռչակել այսպիսի խոսքեր.

Աստված սիրում է ինձ և բարի ծրագիր ունի
իմ կյանքի համար:
Ես բարեհաճություն ունեմ, ուր էլ որ գնամ:
Այն ամենը, ինչին դիպչում է իմ ձեռքը,
բարգավաճում և հաջողվում է:
Աստված բացում է ճիշտ դռներ ինձ համար
և փակում է սխալ դռները:
Ես վարվում եմ իմաստությամբ:
Ես լցված եմ խաղաղությամբ:
Ես ուրախ եմ:
Ես վարվում եմ սիրով:
Այսօր ինձ հետ ինչ-որ բարի բան է
կատարվելու:
Իմ բոլոր երեխաները սիրում են Աստծուն և
ծառայում են Նրան:
Իմ ամուսնությունն ավելի ու ավելի լավ է
դառնում ամեն օր:
Ես օրհնված եմ, ուր էլ որ գնամ:

Այս ցուցակը բառացիորեն կարող է անվերջ լինել: Պարզապես վստահ եղեք, որ այն, ինչ ասում եք, համապատասխանում է Աստծո Խոսքին: Աստծո հետ համաձայնության գալը լիովին նոր աշխարհ կբացի ձեզ համար: Աստծո ծրագիրը կկատարվի ձեր կյանքում, և սատանան ոչ մի կերպ չի կարողանա կանգնեցնել այն:

## Գլուխ 7

# ՆՈՐ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆ

⚜ Ինչպե՞ս եք դուք դիտարկում ձեզ: Ձեր պատկերացումը ձեր մասին նման է լուսանկարի, որը պահում եք ձեր սրտի դրամապանակում: Տարիներ շարունակ, ծառայելով մարդկանց, բացահայտել եմ, որ նրանցից շատերն այնքան էլ չեն սիրում իրենց: Տարիներ շարունակ նույնպես շատ վատ կարծիք ունեի իմ մասին, և դա թունավորում էր ամեն ինչ իմ կյանքում: Աստված սիրում է ձեզ և ցանկանում է, որ դուք նույնպես սիրեք ձեզ: Ոչ թե եսասեր կամ եսակենտրոն ձևով, այլ առողջ իմաստով: Դուք չեք կարող տալ այն, ինչ չունեք: Աստված սիրում է մեզ և ցանկանում է, որ մենք թույլ տանք Իր սիրուն նախ՝ բժշկել մեզ, իսկ հետո հոսել մեզանով այլ մարդկանց մեջ: Եթե դուք հրաժարվեք ընդունել Աստծո սերը ձեր հանդեպ և չսիրեք ինքներդ ձեզ պատշաճ

կերպով, այդպես էլ չեք կարողանա ճշմարտապես սիրել այլ մարդկանց:

Արդյո՞ք ձեր կարծիքը ձեր մասին հիմնված է ձեր գործերի վրա: Շատերս ենք այսպիսին: Այդ դեպքում, մեր կարծիքը չի կարող լավը լինել, քանի որ մեր գործերը չեն կարող մշտապես լավը լինել: Մենք անկատար մարդիկ ենք և սխալներ ենք գործում: Մենք ցանկանում ենք ճիշտ վարվել, բայց, թվում է, միշտ ամեն ինչ փչացնում ենք: Հենց այս պատճառով է, որ մենք ունենք Հիսուսի կարիքը: Նա հայտնում է Իր զորությունը կատարյալ ձևով մեր տկարությունների մեջ:

Աստված անակնկալի չի գալիս ձեր պատճառով: Նա գիտեր, թե ինչպիսին էիք, երբ կանչեց ձեզ: Նա արդեն գիտի այն սխալը, որը երբևէ կգործենք կյանքում, և Նա, միևնույն է, սիրում է մեզ և ցանկանում է շփվել մեզ հետ: Այդքան խիստ մի՛ եղեք ձեր հանդեպ: Սովորե՛ք ընդունել Աստծո ողորմությունը ամեն օր: Արթնացե՛ք ամեն օր և արե՛ք այն, ինչ կարող եք՝ Աստծո փառքի համար: Արե՛ք դա, որովհետև դուք սիրում եք Աստծուն, ոչ թե՝ որ համոզեք Նրան սիրել ձեզ: Նա արդեն սիրում է ձեզ նույն սիրով, որով միշտ սիրելու է, և Նրա սերը ձեր հանդեպ կատարյալ է: Ամեն օրվա վերջում խնդրե՛ք Աստ-

ծուն ներել ձեզ՝ ձեր բոլոր մեղքերի և սխալների համար, լա՜վ քնեք և թարմացած սկսեք հաջորդ օրը:

Սատանան ձեր դեմ է, բայց Աստված ձեր կողմից է: Դուք պետք է Աստծո կողմից լինեք, քանի որ, երբ երկուսը համաձայնում են, նրանք զորավոր են դառնում: Դուք թանկ եք Աստծո համար և ունեք շատ տաղանդներ, որոնք Նա կարող է գործածել: Մի՛ նայեք միայն ձեր թերություններին: Մի՛ մտածեք, թե որքան ճանապարհ դեռ պետք է անցնեք. նույնպես մտածեք, թե որքան ճանապարհ եք արդեն անցել: Այժմ դուք Հիսուս Քրիստոսին հավատացող անձնավորություն եք, և սա բոլոր հրաշքների սկիզբն է:

## Հասկանալ արդարությունը

Արդարությունը (արդար դիրքն Աստծո առջև) ձեռք է բերվում Հիսուսին հավատալով, ոչ թե մեր գործերով: Արդարությունն Աստծո պարգևն է, որը տրվում է, երբ դուք ընդունում եք Հիսուսին որպես ձեր Փրկչի:

Կան շատ սուրբգրային հատվածներ, որոնք հաստատում են սա: Ես կթվարկեմ մի քանիսը՝ ձեզ խրախուսելու համար:

«Հանուն մեզ Նա [բառացիորեն] դարձրեց Քրիստոսին մեղք՝ Նրան, որ մեղք չգիտեր,

> որպեսզի Նրանում և Նրա միջոցով մենք դառնանք [օժտվենք դրանով, դիտարկվենք որպես դրանում գտնվող և լինենք դրա օրինակներ] Աստծո արդարությունը [այն, ինչ  պետք է լինենք՝ հավանություն ստացած, ընդունված և Նրա առջև ճիշտ դիրք ունեցող՝ Նրա բարությամբ]»:
>
> – Բ Կորնթացիների 5.21, AMP

ԶԱՐՄԱՆԱԼԻ՜ է: Ինչպիսի՜ խոսք: Քրիստոսն անմեղ էր, սակայն մեր հանդեպ ունեցած սիրո շնորհիվ Նա վերցրեց մեր մեղքը, որպեսզի մեզ շնորհիվի զարմանալի շփում Հայր Աստծո հետ: Այժմ Աստված դիտարկում է մեզ որպես հավանություն ստացած, ընդունված և Իր առջև ճիշտ դիրք ունեցող, քանի որ մենք ընդունել ենք Հիսուսին որպես  Փրկչի: Ես կրկին պետք է ասեմ... ՍԱ ԶԱՐՄԱՆԱԼԻ՜ է:

Փոխարենը վախենանք, որ Աստված դժգոհ կամ բարկացած է, մենք կարող ենք կանգնել Նրա առջև «Քրիստոսում»՝ իմանալով, որ մենք ընդունված ենք:

> «Որովհետև ոչ ոք չի արդարացվի (արդարություն չի ստանա, չի արդարանա և ընդունելի չի համարվի) Նրա առջև՝ կատարելով Օրենքով սահմանված գործերը:

Որովհետև Օրենքը [դրա իրական գործառույթը] այն է, որ մարդիկ իմանան մեղքի մասին և գիտակցեն մեղքը [ոչ թե զուտ պատկերացում կազմեն, այլ իմանան, թե ինչ է մեղքը, ինչը կդրդի ապաշխարության, հավատքի և սուրբ բնավորության]»:

– Հռոմեացիների 3.20, AMP

«Այն է՝ Աստծո արդարությունը, որը գալիս է՝ հավատալով Հիսուս Քրիստոսին (Մեսիային) անձնական վստահությամբ և հաստատուն համոզվածությամբ [և այն նախատեսված է] նրանց համար, ովքեր հավատում են: Որովհետև խտրություն չկա»:

– Հռոմեացիների 3.22, AMP

«Սակայն մենք գիտենք, որ մարդն արդարանում է *կամ* համարվում է արդար և ճիշտ դիրք ունեցող Աստծո առջև՝ ոչ թե Օրենքի գործերով, այլ [միայն] Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի, *նաև* [բացարձակ] համոզվածության, նվիրվածության և վստահության միջոցով»:

– Գաղատացիների 2.16, AMP

Ձեր հոգևոր աճի համար կարևոր է, որ գիտակցեք, որ դուք ունեք արդար դիրք Աստծո առջև՝ Հիսուս Քրիստոսին հավատալու շնորհիվ: Սա պարգև է Աստծուց: Եթե մենք մշտապես վատ վերաբերվենք ինքներս մեզ և մտածենք, որ Աստված բարկացած է մեզ վրա, կկորցնենք այն զորությունը, որով Աստված ցանկանում է, որ ապրենք: Մենք ունենք իշխանություն սատանայի հանդեպ՝ որպես Հիսուսին հավատացող մարդիկ, բայց մենք պետք է կանգնենք Աստծո առջև՝ զգեստավորված Նրա արդարությամբ, ոչ թե մեղքի զգացումի և դատապարտության ցնցոտիներով:

Եփեսացիների 6-րդ գլխում գրված է, որ մենք պետք է հագնենք արդարությունը՝ զրահի պես: Զրահը ծածկում է զինվորի սիրտը: Ի՞նչ համոզմունքներ ունենք մեր մասին: Կարո՞ղ եք հավատքով ընդունել, որ արդար դիրք ունեք Աստծո առջև: Դուք կարող եք, եթե պահեք ձեր հայացքն այն ամենի վրա, ինչ Հիսուսն արեց ձեզ համար, և ոչ թե այն սխալների, որոնք գործում եք: Դուք կսխալվեք, և երբ դա տեղի ունենա, արագորեն ապաշխարեք և ընդունեք Աստծո ներումը: Սա միակ միջոցն է, որով կարող ենք արդարությամբ վարվել: Մենք չենք

վարվում մեր սեփական արդարությամբ, քանի որ մեր արդարությունը նման է կեղտոտ լաթերի. փոխարենը, կարող ենք վարվել և պե՛տք է վարվենք Աստծո արդարությամբ՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած մեր հավատքի միջոցով:

Այս նոր զարմանալի վերաբերմունքը, որն այժմ կարող եք ունենալ ձեր հանդեպ, ձեր «նոր կյանքի» մասն է, որը դուք ստանում եք՝ հավատալով Հիսուսին:

## Վայելե՛ք ինքներդ ձեզ

Դուք ազատ եք, որպեսզի վայելեք ինքներդ ձեզ հիմա, և Աստծո կամքն է, որ դուք այդպես վարվեք: Մի՛ հիմնեք ձեր արժեքն այն բանի վրա, ինչ ասում են կամ ասել են մարդիկ ձեր մասին: Մի՛ հիմնեք ձեր արժեքը մարդկանց վերաբերմունքի կամ ձեր ձեռքբերումների վրա: Աստված այնքա՜ն թանկ համարեց ձեզ, որ ուղարկեց Իր Որդուն՝ մահանալու ձեր փոխարեն, և դա ցնծության պատճառ է:

Աստվածաշունչը հստակ սովորեցնում է մեզ՝ Աստված ցանկանում է, որ մենք վայելենք կյանքը, և դա հնարավոր չէ, եթե դուք չեք վայելում ինքներդ ձեզ: Դուք այն անձնավորությունն եք, որից երբեք չեք կարող ազատվել՝ նույնիսկ մեկ վայրկյանով:

Եթե դուք չեք վայելում ինքներդ ձեզ, ձեր կյանքը թշվառ է դառնալու:

Ինչպես և ես, միգուցե դուք տարբերվում եք ձեզ շրջապատող մարդկանցից, բայց դա բնական է: Իրականում, Աստված դիտավորյալ է արել դա: Նա ստեղծել է մեզ մի փոքր տարբեր իրարից: Նա սիրում է բազմազանությունը: Դուք տարօրինակ չեք. դուք եզակի բնօրինակ եք, և ձեր արժեքն ավելին է, քան ցանկացած կրկնօրինակի:

Մի՛ համեմատեք ձեզ այլ մարդկանց հետ, մի՛ անցկացրեք ձեր կյանքը՝ մրցակցելով նրանց հետ (տե՛ս Բ Կորնթ. 10.12): Եղեք՝ ինչպիսին որ կաք, և վայելե՛ք ինքներդ ձեզ: Դուք պետք է փոխվեք ձեր կյանքի բազմաթիվ բնագավառներում, ինչպես և բոլորս: Սուրբ Հոգին գործելու է մինչև ձեր կյանքի ավարտը՝ կատարելով այդ փոփոխությունները ձեր մեջ: Բարի լուրն այն է, որ դուք ազատորեն կարող եք վայելել ինքներդ ձեզ, մինչ այդ աշխատանքն ընթացքի մեջ է:

# Գլուխ 8

## ՀԱՎԱՏՔ՝ ՎԱԽԻ ՓՈԽԱՐԵՆ

⚜ Բոլորս գիտենք, թե ինչպիսին է վախի զգացողությունը: Այն տանջում է մեզ և խոչընդոտում մեր առաջընթացը: Վախը կարող է ստիպել մեզ դողալ, քրտնել, թուլություն զգալ, այն դրդում է մեզ փախչել այն բաներից, որոնց պետք է հակառակվենք:

Վախն Աստծուց չէ: Այն սատանայի գործիքն է, որի նպատակն է թույլ չտալ մեզ ապրել այն բարի կյանքը, որն Աստված ցանկանում է տալ մեզ (տե՛ս Բ Տիմոթ. 1.7): Աստված ցանկանում է, որ մենք ապրենք հավատքով: Հավատալը նշանակում է լիովին ապավինել Աստծուն՝ լինելով բացարձակապես վստահ և համոզված Նրա զորության, իմաստության և բարության մեջ: Հավատքը այն բաների ապացույցն է, որոնք չենք տեսնում, և համոզվածությունն է դրանց իրական լինելու մեջ:

Հավատքը գործում է հոգևոր իրականության մեջ: Հավանաբար, դուք սովորել եք հավատալ միայն այն բաներին, որոնք տեսնում և լսում եք, բայց, որպես Աստծո զավակ, դուք պետք է հարմարավետ զգաք ձեզ այնպիսի իրականության մեջ, որը չեք տեսնում (հոգևոր աշխարհում): Մենք չենք տեսնում Աստծուն, քանի որ Նա Հոգի է, բայց մենք անսասան հավատում ենք Նրան: Սովորաբար մենք չենք տեսնում հրեշտակների, բայց Աստծո Խոսքն ասում է, որ նրանք մեր շուրջն են և պաշտպանում են մեզ: Կիրառելով Աստծո և Նրա Խոսքի հանդեպ ունեցած մեր հավատքը՝ մենք կարող ենք հաղորդակցվել հոգևոր իրականության հետ և վերցնել դրանից այն բաները, որոնք Աստված ցանկանում է, որ վայելենք, բայց որոնք դեռ նյութական իրականություն չեն դարձել:

Սատանան չարախնդորեն գրավում է մեր ուշադրությունը մեր հանգամանքների վրա և փորձում է վախ ներշնչել ապագայի հանդեպ: Իսկ Աստված ցանկանում է, որ մենք ապավինենք Իրեն՝ հավատալով, որ Ինքն ավելին է, քան ցանկացած հանգամանք և սպառնալիք սատանայից:

Աստվածաշնչում կան բազմաթիվ հրաշալի օրի-

նակներ այնպիսի տղամարդկանց և կանանց մասին, որոնք հայտնվեցին հուսահատություն առաջացնող հանգամանքներում, և վախը համակեց նրանց սրտերը: Այնուամենայնիվ, նրանք որոշեցին հավատալ Աստծուն և փառավոր ազատություն ստացան: Դուք պետք է որոշեք՝ ապրելու եք վախո՞վ, թե՞ հավատքով: Թեև արդեն քրիստոնյա եք, դուք կարող եք շարունակել ձեր կյանքը՝ տանջվելով ամեն տեսակի վախերից, եթե որոշում չկայացնեք, որ ապրելու եք հավատքով: Դուք հավատքով ընդունել եք Հիսուսին որպես ձեր Փրկչի. հաջորդ քայլն է, որ սովորեք ապրել հավատքով:

> «Որովհետև Ավետարանում հայտնվում է Աստծո կողմից վերագրվող մի արդարություն, որը և՛ բխում է հավատքից, և՛ տանում է դեպի հավատքը [որը բացահայտվում է հավատքի ճանապարհով և առաջացնում է ավելի շատ հավատք]: Ինչպես որ գրված է՝ այն մարդը, որը հավատքի միջոցով արդար և ուղիղ է, կապրի, և կապրի հավատքով»:
>
> – Հռոմեացիների 1.17, AMP

Երբ մենք հասկանում ենք Աստծո սերը և գիտակ-

ցում, որ արդարացել ենք Աստծո առջև Հիսուսի մահվան և հարության միջոցով, մեզ համար ավելի հեշտ է դառնում հավատքով վարվելը: Մենք սկսում ենք վստահել, որ Աստված կհոգա մեր մասին, փոխարենը մտածենք, որ ինքներս պետք է անենք դա:

Համարձակությունը չի նշանակում վախի բացակայություն. այն նշանակում է գործել նույնիսկ վախ զգալու դեպքում: Պատվիրելով Իր ծառաներին չվախենալ, Աստված նկատի չուներ, որ նրանք չպետք է ունենային վախի զգացում, այլ՝ որ նրանք պետք է հնազանդ լինեին Իրեն՝ անկախ իրենց զգացմունքներից: Աստված գիտի, որ վախի հոգին մշտապես փորձելու է թույլ չտալ մեզ առաջընթաց ունենալ Իր հետ: Ահա թե ինչու է Նա շարունակ հիշեցնում Իր Խոսքում, որ Ինքը մեզ հետ է ամեն ժամանակ, և այդ պատճառով մենք ստիպված չենք խոնարհվել վախի առջև:

Էլեոնոր Ռուզվելտն ասել է. «Դուք ուժ, համարձակություն և վստահություն եք ստանում յուրաքանչյուր փորձառությունից, որի ժամանակ գիտակցաբար կանգ եք առնում և նայում եք վախի աչքերին: Դուք պետք է անեք այն, ինչը, ձեր կարծիքով, չեք կարող»:

> «Եղի՛ր ուժեղ, խիզախ և հաստատակամ. մի՛ վախեցիր և մի՛ սարսափիր նրանց առջև, որովհետև քո Տեր Աստված գնում է քեզ հետ. Նա չի ձախողի և չի թողնի քեզ»:
>
> – Երկրորդ Օրինաց 31.6, AMP

Միայն հավատքն է հաճելի Աստծուն: Այն, ինչ մենք ստանում ենք Աստծուց, հավատքի միջոցով է: Այդ իսկ պատճառով, Քրիստոսին ընդունած նորահավատի համար անչափ կարևոր է սովորել հավատքի մասին և ապրել հավատքով: Ուժեղ հավատք կառուցելը նման է ուժեղ մկաններ զարգացնելուն: Դուք քիչ-քիչ մարզում եք ձեր հավատքը, և ամեն անգամ այն ավելի ուժեղ է դառնում:

Մատթեոս 17.20-ը սովորեցնում է, որ ամեն ինչ հնարավոր է այն մարդու համար, ով հավատում է: Նույնիսկ փոքրիկ հավատքը կարող է նեղության սարեր շարժել մեր կյանքում: Հավանաբար, ամբողջ կյանքում դուք փորձել եք լուծել ձեր բոլոր խնդիրները և շատ հաճախ հիասթափություն և հուսալքություն եք զգացել: Եթե այդպես է, դուք գտնվում եք նոր փորձառության եզրին: Այժմ կարող եք խոսել Աստծո հետ (աղոթել) և խնդրել Նրան ներգրավվել այն ամենի մեջ, ինչը մտահոգում է ձեզ, և դուք կբա-

ցահայտեք, որ այն, ինչ անհնար է մարդու համար, հնարավոր է Աստծո համար:

Ձեր հավատքով կլինի ձեզ (տե՛ս Մատթ. 9.29): Հնարավոր է, որ դուք ապրել եք ձեր կյանքի մեծ մասը վախով, բայց հիմա ժամանակն է փոխարինել այդ վախը Աստծո հանդեպ հավատքով: Նոր ճանապարհները սովորելու համար ժամանակ կպահանջվի, բայց մի՛ հուսալքվեք և մի՛ հանձնվեք: Ամեն ինչ այս երկրում ենթակա է աստիճանական աճի օրենքին: Եթե մենք շարունակում ենք անել այն, ինչ Աստված պատվիրում է մեզ, կամաց-կամաց ամեն ինչ փոխվում է:

# *Գլուխ 9*

## ՎԱՅԵԼԵ՛Ք ԿՅԱՆՔԸ

> «Գողը գալիս է միայն որպեսզի գողանա և սպանի և կործանի: Ես եկա, որ կյանք ունենան և վայելեն այն, և ունենան այն առատապես (լրիվ չափով, մինչև բերնեբերան լցվելը)»:
>
> – Հովհաննես 10.10, AMP

Հիսուսը մահացավ, որպեսզի դուք վայելեք ձեր կյանքը: Սա չի նշանակում, որ դուք կստանաք ամեն ինչ ձեր ուզածով և երբեք չեք հանդիպի դժվարություններին: Սա նշանակում է, որ Աստծո հետ շփման միջոցով կարող եք վեր բարձրանալ այս աշխարհի թշվառությունից և բաժնեկցել հարության կյանքին՝ ապրելով Աստծով, Աստծո հետ և Աստծո համար՝ Սուրբ Հոգու զորությամբ:

Աստված մեր իրական կյանքն է: Նրանում մենք

ապրում ենք, շարժվում ենք և կանք: Սովորելով վայելել Աստծուն, դուք ազատություն կստանաք, որպեսզի վայելեք ձեր կյանքի ամեն օրը: Վայելե՛ք շփումը Նրա հետ: Աստված մտահոգված է այն ամենով, ինչը մտահոգում է ձեզ, և Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված կկատարի այն, ինչ մտահոգում է ձեզ: Նա մշտապես գործում է ձեր կյանքում, որպեսզի է՛լ ավելի լիարժեք կերպով համապատասխանեցնի ձեզ Իր կամքին:

Մի՛ վախեցեք Աստծուց սխալ ձևով: Մենք պետք է ունենանք երկյուղածություն Աստծո հանդեպ, ինչը նշանակում է, որ պետք է հարգենք Նրան, գիտակցենք, որ Նա ամենակարող է, և որ Նա նկատի ունի այն, ինչ ասում է: Բայց ոչ մի դեպքում չպետք է վախենանք, որ Աստված բարկանում է ամեն անգամ, երբ մենք սխալ ենք գործում, կամ որ Նա կպատժի մեզ ամեն անգամ, երբ կատարյալ վարք չցուցաբերենք: Աստված ողորմած է և արագ չի բարկանում: Նա երկայնամիտ է, Նա գիտի մեր կազմվածքը և հասկանում է մեր թուլություններն ու տկարությունները:

Եթե դուք նման եք մյուս մարդկանց, ձեր կյանքում և ձեր անհատականության մեջ կան շատ բաներ, որոնք պետք է փոխվեն, և Աստված կփոխի

դրանք: Բայց բարի լուրն այն է, որ դուք կարող եք վայելել Աստծուն և ձեր կյանքը, մինչ Նա գործում է ձեզանում:

Միգուցե ձեր այսօրվա կյանքը դուր չի գալիս ձեզ, բայց այն միակն է, որը ներկայումս ունեք. այնպես որ, դուք պետք է սկսեք վայելել այն: Գտե՛ք լավ բաներ ձեր կյանքում: Կենտրոնացե՛ք դրականի վրա և սովորե՛ք տեսնել լավը ամեն ինչում: Վայելե՛ք ձեր ընտանիքը և ձեր ընկերներին: Բծախնդրորեն մի՛ վերաբերվեք նրանց և շարունակ մի՛ փորձեք փոխել նրանց: Աղոթե՛ք նրանց համար և վստահե՛ք Աստծուն փոփոխությունների համար:

Վայելե՛ք ձեր աշխատանքը, վայելե՛ք ձեր տունը և վայելե՛ք ձեր սովորական ամենօրյա կյանքը: Սա հնարավոր է, եթե վստահեք Աստծուն և որոշեք դրական վերաբերմունք ունենալ: Պահե՛ք ձեր հայացքն Աստծո վրա, և ոչ թե այն ամենի, ինչը ճիշտ չէ ձեր ներսում, ձեր կյանքում, ձեր ընտանիքում և այս աշխարհում: Աստված բարի ծրագիր ունի ձեզ համար, և Նա արդեն սկսել է իրագործել այն: Դուք կարող եք նախապես ուրախանալ՝ ակնկալելով այն բարի բաները, որոնք կատարվելու են ձեզ հետ:

Շատերի կարծիքով, նրանք չեն կարող վայելել

իրենց կյանքը, քանի դեռ խնդիրներ ունեն, բայց դա սխալ մտածելակերպ է: Մի՛ կենտրոնացեք ձեր անցյալի սխալների և զղջումների վրա: Շարունակե՛ք մտածել այն մեծ նոր ապագայի մասին, որն ունեք Հիսուս Քրիստոսի շնորհիվ: Դուք կարող եք վայելել այն ամենը, ինչը կորոշեք վայելել: Դուք կարող եք վայելել, երբ խցանման մեջ եք, եթե որոշեք դա: Հիշեք, որ ես սովորեցնում եմ ձեզ նոր կյանքի մասին, և ձեր վերաբերմունքը կյանքին՝ կարևոր դեր է կատարում:

Ես վերջապես սովորեցի վայելել իմ կյանքն այն փուլում, որում գտնվում եմ, քանի դեռ իմ նպատակին հասնելու ճանապարհին եմ, և լրջորեն հորդորում եմ ձեզ անել նույնը: Աստված շատ բան է կատարելու ձեր կյանքում, և Նա չի ցանկանում, որ դուք դժբախտ լինեք, մինչ անում է այդ ամենը: Ինչպես որ մանուկները պետք է չափահաս դառնան, այնպես էլ քրիստոնյաները պետք է աճ ունենան: Հաճախ այս ընթացքը տևում է ավելի երկար, քան մենք ցանկանում ենք, բայց այն չվայելելը անիմաստ է:

Աստված չի ակնկալում, որ դուք կատարյալ լինեք այսօր: Իրականում, Նա արդեն գիտի, որ դուք

երբեք կատարյալ չեք լինի, քանի դեռ ապրում եք այս աշխարհում: Այնուամենայնիվ, Նա ակնկալում է, որ յուրաքանչյուրս մշտապես ձգտի դրան: Մենք պետք է արթնանանք ամեն առավոտ և անկեղծորեն անենք այն, ինչ կարող ենք՝ Աստծուն ծառայելու համար: Մենք պետք է խոստովանենք մեր ձախողումները և ներում խնդրենք մեր մեղքերի համար՝ կամենալով թողնել դրանք: Եթե մենք այսպես վարվենք, Աստված կանի մնացածը: Նա կշարունակի գործել մեզանում Իր Սուրբ Հոգով: Նա կսովորեցնի, կփոխի և կգործածի մեզ: Դուք քայլ եք արել նոր կյանքի մեջ, և համոզված եմ՝ երբեք չեք զղջա սրա համար: Վայելե՛ք Աստծուն, վայելե՛ք ինքներդ ձեզ և վայելե՛ք այն կյանքը, որը Հիսուսը շնորհեց ձեզ Իր կյանքի գնով:

# ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ

Աստված սիրում է ձեզ և ցանկանում է հաղորդակցվել ձեզ հետ: Եթե դուք Հիսուս Քրիստոսին դեռ չեք ընդունել որպես ձեր Փրկիչ, ապա կարող եք անել դա հենց հիմա: Պարզապես բացե՛ք ձեր սիրտը Նրա առջև և աղոթե՛ք այս աղոթքը.

*«Հա՛յր, ես գիտեմ, որ մեղանչել եմ Քո դեմ: Խնդրում եմ, ների՛ր ինձ և մաքրի՛ր ինձ: Ես խոստանում եմ վստահել Հիսուսին՝ Քո Որդուն: Հավատում եմ, որ Նա մահացավ ինձ համար և խաչի վրա վերցրեց իմ մեղքն Իր վրա: Ես հավատում եմ, որ Նա հարություն է առել մեռելներից: Հենց հիմա իմ կյանքը տալիս եմ Հիսուսին:*

*Հա՛յր, շնորհակա՛լ եմ Քո շնորհած ներման պարգևի և հավիտենական կյանքի պարգևի համար: Խնդրում եմ, օգնի՛ր ինձ ապրել Քեզ համար, Հիսուսի անունով, ամե՛ն»:*

Եթե դուք ձեր սրտից աղոթեցիք, ապա Աստված ընդունեց ձեզ, մաքրեց և ազատ արձակեց հոգևոր մահվան կապանքից: Ժամանակ հատկացրե՛ք, որպեսզի ընթերցեք և ուսումնասիրեք այս սուրբգրային համարները և խնդրե՛ք Աստծուն, որ խոսի ձեզ հետ ձեր նոր կյանքում:

Հովհաննես 3.16, Ա Կորնթացիների 15.3,4
Եփեսացիների 1.4, Եփեսացիների 2.8,9
Ա Հովհաննես 1.9, Ա Հովհաննես 4.14,15
Ա Հովհաննես 5.1, Ա Հովհաննես 5.12,13

Աղոթե՛ք և խնդրե՛ք Նրան, որ օգնի ձեզ գտնել լավ եկեղեցի, որը հավատում է Աստվածաշնչին, որպեսզի կարողանաք աճել Քրիստոսի հետ ձեր հարաբերությունների մեջ: Աստված միշտ ձեզ հետ է: Նա կառաջնորդի ձեզ ճիշտ ժամանակին և ցույց կտա, թե ինչպես կարելի է ապրել լիառատ կյանքով, որը պատրաստել է ձեզ համար:

# ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

ՋՈՅՍ ՄԱՅԵՐԸ Աստվածաշնչի առաջատար ուսուցիչներից է աշխարհում: Նա #1 հանրաճանաչ հեղինակն է՝ ըստ «Նյու Յորք Թայմս» ամսագրի, և գրել է ավելի քան հարյուր գիրք, որոնց թվում են *«Պարզ դարձրու քո կյանքը»* և *«Երբեք մի՛ հանձնվիր»* գրքերը, *«Միտքը կռվի դաշտն է»* ամբողջական գրքաշարը, ինչպես նաև երկու վեպ՝ *«Պեննին»* և *«Ցանկացած րոպե»:* Նա նույնպես թողարկել է հազարավոր աուդիո ուսուցումներ և ունի ծավալուն վիդեոդարան: Ջոյսի «Վայելել ամենօրյա կյանքը» հաղորդումները հեռարձակվում են ռադիոյով և հեռուստատեսությամբ աշխարհով մեկ: Նա շատ է ճանապարհորդում՝ համաժողովներ անցկացնելով: Ջոյսը և ամուսինը՝ Դեյվը, ունեն չորս մեծահասակ երեխաներ և բնակվում են Միսսուրի նահանգի Սենթ Լուիս քաղաքում:



# ԵՐԲԵՎԷ ՄՏԱԾԵ՞Լ ԵՔ, ԹԵ...

*«Ինչո՞ւ եմ ես այստեղ»: «Ո՞րն է իմ կյանքի նպատակը»: «Արդյո՞ք կա Աստված»: «Պետք է լինի ավելին, քան այս իրականությունը»:*

Բոլորս ենք ունենում նման հարցեր կամ մտքեր մեր կյանքի որոշակի փուլում: Եվ քանի դեռ չենք գտել այս հարցերի պատասխանները, մենք չենք ունենա խաղաղություն, իրական, տևական ուրախություն և բավականություն կյանքում:

Ջոյսի «ՆՈՐ ԿՅԱՆՔ» գրքում դուք կգտնեք ձեր մտքում ծանրացող այս հարցերի պատասխանները: Ամեն ինչ սկսվում է, երբ իմանում ենք ճշմարտությունն Աստծո մասին, և այն մասին, թե որքան է Նա սիրում մեզ:

Ընթերցելով այս գիրքը՝ կբացահայտեք ամենակարևոր որոշումը, որը պետք է կայացնեք կյանքում, նաև՝ թե ինչու դուք ունեք Աստծո կարիքը և ինչու է Նա ձեր բոլոր խնդիրների լուծումը՝ այն խնդիրների, որոնք դուք ունեք, և որոնց երբևէ կբախվեք: Դուք իսկապես կարող եք ապրել և վայելել այն կյանքը, որի համար ստեղծված եք:

Ճշմարտությունն այն է, որ Աստված սիրում է ձեզ, և Նա զարմանալի ծրագիր ունի ձեր կյանքի համար: Դուք կարող եք ստանալ այն, ինչին ձգտում եք և ինչի կարիքը երբևէ կունենաք՝ Նրա հետ անձնական շփման միջոցով: Սա է այն նոր կյանքի գաղտնիքը, որն իրականում փնտրում եք:

**Հետևե՛ք մեզ Թվիթերում. @FaithWords**
**Հետևե՛ք մեզ Ինստագրամում. @FaithWordsBooks**
**Հավանե՛ք մեզ Ֆեյսբուքում. Facebook.com/FaithWords**

www.faithwords.com
Նույնպես հասանելի է որպես էլ. գիրք
Կազմի դիզայնը՝ Մեգան Մաթենիի
Կազմի լուսանկարը՝ Մեգան Մաթենիի
Կազմը © 2015 «Hachette Book Group, Inc.»
Տպագրված է Հայաստանի Հանրապետությունում